Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

OPEN SOCIETY
FOUNDATIONS

ՏԵՂԵԿԱՆՔ

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ

2015

2014 թվականի ընթացքում ՀՀ զինված ուժերում եւ ԼՂ պաշտպանության բանակում 42 միջադեպի հետեւանքով մահացել է 46 զինծառայող, որոնց թիվը 2013 թ-ի համեմատությամբ ավելացել է 15-ով:

2014 թ-ին գրանցված մահացության 46 դեպքերից 26-ը տեղի է ունեցել հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով[1], 6-ը՝ դժբախտ պատահարի, 4-ը՝ սպանության /2-ը՝ դիտավորյալ սպանության, 2-ը՝ զենքի հետ վարվելու կանոնների խախտման/, 3-ը՝ մարտական հերթապահություն կամ ծառայություն կրելու կանոնների խախտման, 3-ը՝ առողջական խնդիրների եւ ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրման, 3-ը՝ ինքնասպանության (ըստ հարուցված քրեական գործի որակման), 1-ը՝ զենքի հետ վարվելու կանոնների խախտման պատճառով:

Հարկ է նշել, որ, եթե վերջին չորս տարիների ընթացքում հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով մահացության դեպքերը կազմում էին ընդհանուր մահացության մինչեւ 28 %-ը, ապա 2014 թվականին այն կտրուկ բարձրացել եւ կազմել է գրեթե 57 %: Եթե կատարենք հետեւյալ բաժանումը, ապա կարող ենք փաստել, որ հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով մահացած 26 զինծառայողներից 10-ը մահացել են հակառակորդի դիվերսիոն-հետախուզական խմբերի ներթափանցման հետեւանքով, իսկ մնացած 16-ը դիպուկահարների կրակոցից, չնայած միշտ չէ, որ ԶԼՄ-ներում նշվում է, որ դեպքը տեղի է ունեցել դիպուկահարների կրակոցներից: Նկատենք, որ զուգահեռաբար նախորդ տարվա համեմատությամբ կրկնակի չափով աճել է հրադադարի ռեժիմի խախտման դեպքերի թիվը / տես գծապատկեր 1/:

[1] 1 դեպքի մասին տեղեկությունը տարածվել է ԼՂ նախագահի կողմից հետմահու պարգեւատրված զինծառայողների մասին հրամանագրում: Պատճառը չի նշվում, բայց զինծառայողը պարգեւատրվել է *«Մարտական ծառայություն» մեդալով՝ ԼՂ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար* - http://www.president.nkr.am/am/news/lawsOrders/2654/

Գծապատկեր 1.



Ինչպես տեսնում ենք գծապատկեր 1-ից՝ հրադադարի ռեժիմի խախտումների թիվը կտրուկ ավելացել է մայիս ամսին եւ շարունակվել մինչեւ օգոստոս ամիսը ներառյալ: Այնուհետեւ հոկտեմբեր ամսից կրկին գրանցվել է կրակոցների թվի աճ:

Տարվա կտրվածքով հրադադարի ռեժիմը խախտվել է **30310** անգամ, այնինչ 2013թ. այս թիվը կազմել է **13250**:

Միաժամանակ, ինչպես տեսնում եք գծապատկեր 2-ում, ավելի քան հնգապատկվել է նաեւ հրադադարի ռեժիմի խախտումների հետեւանքով մահացությունների թիվը: Գծապատկեր 2.



Մահացության դեպքերից 14-ը տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության, 32-ը՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում:

Հարկ է նշել, որ 2014թ. ***հրադադարի ռեժիմի*** խախտման 26 դեպքերից 23-ը տեղի են ունեցել ԼՂ տարածքում, այնինչ դրանց թիվը նախորդ տարի եղել է 1-ը՝ ընդհանուր 5 գրանցված դեպքից:

3-րդ գծապատկերում համեմատության մեջ ներկայացվում է 2014թթ. մահացությունների դեպքերն ըստ տարածաշրջանների:

Գծապատկեր 3.


25
20
15
10
5
0
23
3
0 0
0 1
1 2
0 0
1 1
1 1
2 1
4 2
2 1
ՀՀ
ԼՂ
Հրադադարի ռեժիմի խախտում
Անվտանգության կանոնների խախտում
Զենքի հետ վարվելու կանոնների...
Ինքնասպանություն
Կանոնադրային հարաբերությունների...
Դիտավորյալ սպանություն
Սպանություն՝ զենքի հետ վարվելու...
Սարսափն ծառայություն կրելու...
Դժբախտ պատահար
Առողջական խնդիրներ

Գծապատկեր 4.



2014թ. զոհերից 8-ը պայմանագրային զինծառայողներ են /1-ը ՀՀ-ում ՌԴ զորամասի ազգությամբ հայ զինծառայող/:

Մահացած զինծառայողներից 13-ը սպայական կազմից են /2 լեյտենանտ, 5 ավագ-լեյտենանտ, 2 կապիտան, 2 մայոր, 1 փոխգնդապետ եւ 1 գնդապետ/, մյուս 25-ը՝ ժամկետային շարքային զինծառայողներ:

2014 թվականի 46 մահվան դեպքերից 34-ի վերաբերյալ քրեական գործ է հարուցվել.

- **16**-ը՝ *ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով, որից* **3**-ի զինծառայողների մահվան փաստով քրեական գործեր են հարուցվել նաեւ *ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ հոդվածով՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը (ուղղաթիռի կործանման դեպք),*
- **3** դեպքի առիթով քրեական գործ է հարուցվել *ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ մարտական հերթապահության կամ*

մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը, որն առաջացրել է ծանր հետեւանքներ,

- 3 դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ *ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը*,
- 2-ը՝ *ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասի՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը*,
- 2-ը՝ *ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ*,
- 3-ը՝ *ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ*,
- 1 քրեական գործ հարուցվել է *ՀՀ քրեական օրենսգրքի 365 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը*,
- 1-ը՝ *ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 1-ին մասով՝ ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքը, որը պատճառել է էական վնաս*,
- 1-ը՝ *ՀՀ քրեական օրենսգրքի 373 հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ զենքի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ*,
- 1 դեպք՝ *ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ*:

Մյուս 12 դեպքերով արդյոք հարուցվել են քրեական գործեր եւ ինչ հոդվածներով՝ չի նշվում:

Նկատենք, որ չնայած հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտման հետեւանքով մահացել են 26 հոգի, սակայն դրանցից միայն 15 հոգու դեպքում է նշվում, որ հարուցվել է քրեական գործ *ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով*: Մի կողմից, նման որակմամբ քրեական գործի հարուցման համար արդյոք կան բավարար հիմքեր, մյուս կողմից, եթե կան, ապա ինչու մնացած դեպքերում ևս չեն հարուցվել նույն հիմքով քրեական գործեր?

1 պայմանագրային զինծառայողի մահվան առնչությամբ հարուցված քրեական գործի հոդվածը ՊՆ-ն դեռեւս չի նշում: Մյուս 10 զինծառայողների մահվան առնչությամբ քրեական գործ հարուցելու վերաբերյալ տեղեկատվություն չի տարածվել:

Ըստ առկա տեղեկատվության՝ հարուցված 32 քրեական գործերը գտնվում են նախաքննության փուլում: Մեկ գործ դատաքննության փուլում է: Այս մասին պաշտոնական տեղեկատվությունը կներկայացվի ավելի ուշ:

46 մահացության դեպքերից պաշտոնական հաղորդագրություն տարածվել է միայն 36-ի մասին: 2014 թ-ի հուլիսի վերջին պաշտպանության բանակում 2 մահացությունների, մասնավորապես՝ կապիտան Արմեն Հայրապետյանի եւ լեյտենանտ Գոռ Գրիգորյանի մահվան փաստերի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն չի տարածվել: Նշված սպաների մասին մանրամասներ տարածվել են շատ քիչ թվով կայքերում, այն էլ միայն վերջիններիս հետմահու պարգեւատրումներ շնորհելու մասին տեղեկացնելու շրջանակներում:

Հուլիս-օգոստոս ամիսներին դիվերսիայի հետեւանքով զոհված զինծառայողների թվի մասին ամփոփ տեղեկատվություն.

Հարկ է նշել, որ ՀՀ նախագահի կողմից հետմահու պարգեւատրված զինծառայողների ցանկում, որում ներկայացված են հուլիսի 31-ին եւ օգոստոսի 2-ին հակառակորդի դիվերսիայի հետեւանքով 4 եւ օգոստոսի 4-ին դիպուկահարի կրակոցի հետեւանքով 1 զոհի անուններ, նշված է նաեւ լեյտենանտ Գոռ Գրիգորյանի անունը (Հայրենիքի սահմանների պաշտպանության գործում ցուցաբերած անձնական խիզախության եւ նվիրումի, կյանքին

սպառնացող վտանգի պայմաններում ծառայողական պարտքը անձնազոհաբար կատարելու համար հետմահու պարգեւատրել «Մարտական ծառայության» մեդալով)[2]: Գոռ Գրիգորյանի մահվան վերաբերյալ առանձին հաղորդագրություն ի սկզբանե չի տարածվել: Այսինքն՝ առաջին անգամ Գ. Գրիգորյանի մահվան մասին հանրությունը իմանում է հետմահու պարգեւատրված զինծառայողների անունների ցանկից: Մինչդեռ ԼՂ ՊԲ նախարար Մովսես Հակոբյանի կողմից[3] Մարտակերտում դիվերսիոն գործողությունները հետ մղելու եւ արժանի հակահարված տալու համար մի շարք զինվորների եւ սպաների պարգեւատրման արարողության ժամանակ՝ 2014 թ-ի օգոստոսի 19-ին, հայտարարեց միայն 5 հոգու անուն, որոնցում բացակայում էր Գոռ Գրիգորյանի անունը:

Aravot.am կայքի թղթակցի տեղեկացմամբ՝ ԼՂ ՊԲ մամուլի պատասխանատու ***Մենոր Հասրաթյանը, այն հարցին, թե ինչու է Գ. Գրիգորյանի անունը բացակայում պարգեւատրվողների ցանկից, պատասխանում է, որ Գ. Գրիգորյանը զոհվել է համածառայակցի կողմից՝ զենքի օգտագործման կանոնների խախտման արդյունքում՝ հերթապահության ժամանակ[4]:*** Լրագրողի հարցին, թե՝ ամեն տեղ գրված է, որ նա դիվերսիայի արդյունքում է զոհվել, Ս. Հասրաթյանը պնդում է, որ ինքը նման տեղեկատվություն չի տարածել եւ չի կարող մյուսների փոխարեն պատասխան տալ, հավելելով, որ դա է իսկությունը:[5]

Այսպիսով, վերը նշված երկու դեպքերը ցույց են տալիս, որ հրադադարի ռեժիմի խախտման դեպքերի ակտիվ փուլում /հուլիս-օգոստոս/ մարտական հերթապահության ընթացքում արձանագրվեցին մահվան դեպքեր, որոնք կապված չէին հրադադարի ռեժիմի խախտման հետ:

Նկատենք, որ ոչ մարտական գործողությունների հետեւանքով 20 մահացության դեպքերից 8-ը վերստին տեղի են ունեցել 2014 թ-ի մայիս-օգոստոս ամիսներին՝ հակառակորդի կողմից հրադադարի ռեժիմի խախտումների ակտիվ փուլում:

Այսինքն՝ նույնիսկ հակառակորդի կողմից ակտիվ ռազմական գործողությունների ժամանակահատվածում պատշաճ մակարդակով չի ապահովվել զինվորական

---

[2] http://www.hayzinvor.am/27607.html , http://www.president.am/hy/decrees/item/1224/

[3] http://www.aravot.am/2014/08/21/490341/

[4] http://www.aravot.am/2014/08/21/490341/

[5] Լրագրողի մյուս հարցին, թե՝ ինչո՞ւ է այդ դեպքում Գոռ Գրիգորյանը ՀՀ նախագահի կողմից պարգեւատրվել «Մարտական ծառայության» մեդալով, Ս. Հասրաթյանը պատասխանել է. «Գոռ Գրիգորյանը յոթերորդ պաշտպանական գոտու ամենաբարդ դիրքում է կանգնած եղել, ինքը դիրք էր պահում, մարտական հերթապահության ժամանակ է զոհվել, ***հետո ի՞նչ, որ համածառայակցի կողմից կանոնների խախտման արդյունքում է զոհվել, բայց ինքը սահմանը պահում էր ամենադժվարին պահին, եւ պետությունը գնահատել է»:***

կարգապահության, մարտական հերթապահության կանոնների եւ անվտանգության կանոնների պահանջները:

Գրիշա Խաչատրյանի մահվան վերաբերյալ ԶԼՄ-ներով տարածված տեղեկատվությունը եղել է հակասական:

2014 թ-ի հունիսի 20-ին մահացած զինծառայող **Գրիշա Խաչատրյանի** մահվան փաստի վերաբերյալ տարածվել է հետեւյալ տեղեկատվությունը. եթե սկզբում ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Ա. Հովհաննիսյանը[6] Գ. Խաչատրյանի մահվան դեպքը ներկայացրեց որպես հրադադրի ռեժիմի խախտման հետեւանք, ապա ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հայտարարեց, որ Գ. Խաչատրյանը նախնական տվյալներով մահացու վիրավորում ստացել է զենքի օգտագործման կանոնները խախտելու հետեւանքով:

Իսկ արդեն դեպքից մեկ օր անց ՀՀ ՊՆ քննչական ծառայությունը հայտնեց, որ Գրիշա Խաչատրյանի մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ սպանության հիմքով (ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով):

ԼՂ նախագահի պաշտոնական կայքից տեղեկացել ենք, որ ԼՂ նախագահի նոյեմբերի 27-ի հրամանագրով ԼՂ պաշտպանության բանակի N զորամասի շարքային (պայմանագրային) **Վիտալիկ Պողոսյանը** հետմահու **պարգեւատրվել է** «Մարտական ծառայություն» մեդալով, սակայն նրա մահվան վերաբերյալ մինչ այդ որեւէ տեղեկատվություն չէր տարածվել: Հարկ է նշել, որ Բակո Սահակյանի կողմից ստորագրված հրամանագրում միայն նշվում է, որ զինծառայողը պարգեւատրվել է «ԼՂ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար»:[7]

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2014թ. դեկտեմբերին ՀՀ ՊՆ հասցեագրված հարցմամբ փորձել է պարզել դեպքի մանրամասները: ՀՀ ՊՆ-ից ստացված գրությամբ հայտնվում է, որ զինծառայողի մահվան փաստի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ: Իսկ պահանջված տեղեկատվությունն այն մասին, թե երբ է տեղի ունեցել դեպքը, որ թվականին, ՊՆ-ն համարում է գաղտնի տեղեկատվություն:

Այնուամենայնիվ, կազմակերպությանը դեպքի մասին մանրամասներ տրամադրվեց ՀՀ զինվորական դատախազության կողմից՝ 2015թ. հունվարի 27-ին, ի պատասխան 2014 թ. դեկտեմբերին ուղարկված հարցման: Գրությամբ մասնավորապես տեղեկացվել է, որ պայմանագրային զինծառայող Վիտալի Էդիկի Պողոսյանը զոհվել է ադրբեջանական կողմից

---

[6] http://armlur.am/187617/

[7] http://www.president.nkr.am/am/news/lawsOrders/2654/

արձակված կրակոցից 2014թ. նոյեմբերի 9-ին՝ մարտական դիրքի թիկունքային հատվածում ինժեներական աշխատանքներ կատարելիս: Զինծառայողը հրազենային վիրավորում է ստացել որովայնի շրջանում, ինչի հետևանքով տեղում մահացել է:

ՀՀ զինդատախազությունից նաև տեղեկացվել է, որ փաստի առթիվ նույն օրը՝ 2014 թ. նոյեմբերի 9-ին ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ առաջին կայազորային քննչական բաժնում հարցուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենքգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով: Նախաքննությունը շարունակվում է:

Ինչ վերաբերում է 2014թ. դեկտեմբերի 21-ին ԼՂ-ում մահացած ժամկետային զինծառայող Դավիթ Քոլոյանի մահվան պատճառին, ապա ի սկզբանե նշվեց, որ նա մահացել է նռնակի պայթյունից: Դեպքից 3 օր անց ՀՀ քննչական կոմիտեի լրատվական ծառայությունը տարածեց տեղեկատվության այն մասին, որ 2014թ. դեկտեմբերի 22-ին հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով (*ինքնասպանության փորձի հասցնելը*):

Ստորև ներկայացվում են 2014 թ-ի ընթացքում մահացության դեպքերի վիճակագրական տվյալները եւ դեպքերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

2014 թ. մահացությունների պատճառը/հետեւանքը

Աղյուսակ 1.

Ամիս	Հրադադարի ռեժիմի խախտում	Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	Ինքնա սպանություն	Սպանություն		Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	Դժբախտ պատահար	Առողջակա ն խնդիրներ	Միջադեպերի քանակը	Ընդամենը	Պաշտոնական հաղորդագրու թյան առկայություն
				Դիտավորյալ	Զենքի հետ վարվելու կանոնների խախտում						
Հունվար	2							2	4	4	3
Փետրվար							1	1	2	2	0
Մարտ	2					1	2		5	5	4
Ապրիլ							1		1	1	0
Մայիս	3				1	1			5	5	3
Հունիս	4			1		1			5	6	6
Հուլիս	5	1		1					7	8	6
Օգոստոս	3				1		1		4	4	4
Սեպտեմբեր	1		1				1		3	3	3
Հոկտեմբեր	1								1	1	1
Նոյեմբեր	4								2	4	3
Դեկտեմբեր	1		2						3	3	3
Ընդամենը	26	1	3	2	2	3	6	3	42	46	36

Գծապատկեր 2.


2014թ. մահացությունների պատճառը/հետևանքը
Դիվերսիոն հարձակում, 10
Հրադադարի ռեժիմի խախտում, 16
Ինքնասպանություն; 3
Սպանություն /Դիտավորյալ սպանություն/, 2
Սպանություն/ Զենքի հետ վարվելու կանոնների խախտում/, 2
Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում, 3
Առողջական խնդիրներ, 3
Զենքի հետ վարվելու կանոնների խախտում, 1
Դժբախտ պատահար, 6

Մահացության դեպքերի ամփոփ տեղեկատվություն

Աղյուսակ 2.

հ/հ	Անուն ազգանուն	Դեպքի տարեթիվը	Դեպքի տարած աշրջան	Դեպքի վայրը (քաղաք, գյուղ, հոսպիտալ, ճանապարհահատված...)	Զորամասը	Տեղեկատվության տարածման առաջնային աղբյուրը	Քրեական գործ հարուցող մարմինը	Քրեական գործի պաշտոնական որակումը	Դեպքի պատճառը	Որ փուլում է գտնվում գործը
1	Հայկ Մակարյան	15.01.2014	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկը	ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկը	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր.-ի 376 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքը, որը պատճառել է էական վնաս	Առողջական խնդիրներ	Նախաքննություն
2	Արմեն Հովհաննիսյան	20.01.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսարեւելյան (Զրաբերդ) եւ հարավարեւելյան (Կորգան) ուղղություններ		Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	
3	Էդիկ Շահնազարյան	20.01.2014	ՀՀ	Վաղարշապատի հիվանդանոց		Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 376 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ	Առողջական խնդիրներ	Նախաքննություն
4	Կարեն Գալստյան	28.01.2014	ԼՂ	ՊԲ հյուսիսային ուղղությամբ (Մարտակերտի տարածք) տեղակայված զորամասի պահպանության տեղամասի մարտական դիրք	Մարտակերտի զորամասերից մեկի պահպանության տեղամասը	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

5	Արշակ Զադայան	12.02.2014	ՀՀ	Մուրացանի հոսպիտալ/«Արաբկիր» բժշկական կենտրոն	Արարատի զորամասերից մեկը	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 376 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ	Առողջական /սուր թոքաբորբ/	Նախաքննություն
6	Գրիգորի Վարդանյան (պայմանագրային զինծառայող, ՀՀ-ում ՌԴ զորամաս)	26.02.2014	ՀՀ	Ստեփանավան-Լոռիբերդ ավտոճանապարհի 2-րդ կմ հատված	ՀՀ-ում ՌԴ զորամաս	Ոչ պաշտոնական	Լոռու մարզի քննչական բաժնի Ստեփանավանի քննչական բաժանմունք	ՀՀ քր.օր.-ի 242 հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն
7	Եսայի Եսայան (պայմանագրային զինծառայող)	08.03.2014	ՀՀ	Երեւան-Աշտարակ ճանապարհին՝ Քասախ գյուղի մոտ	Երեւանամերձ զորամասերից մեկը	Ոչ պաշտոնական		ՀՀ քր. օր.-ի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներ՝ ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն
8	Արման Ղուկասյան	19.03.2014	ԼՂ	Մարտակերտի մարտական դիրքեր	Մարտակերտի զորամասերից մեկը	Ոչ պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 365-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքը), որն առաջացրել է ծանր հետեւանքներ	Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	Նախաքննություն

9	Գառնիկ Թորոսյան	24.03.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
10	Արայիկ Բաբայան	27.03.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
11	Հարություն Սաֆարյան (Ավագ լեյտենանտ)	31.03.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական			Դժբախտ պատահար /նախնական տվյալներ՝ ականի պայթյունի հետեւանքով/	
12	Հովհաննես Հովհաննիսյան (Գնդապետ)	26.04.2014	ՀՀ	Երեւան-Սեւան ավտոճանապարհ		Ոչ պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն
13	Ներսես Կարապետյան	10.05.2014	ՀՀ	Տավուշի մարզի ք. Իջեւանի զորամասերից մեկ	Իջեւանի զորամասերից մեկը	Ոչ պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 365-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը որն առաջացրել է ծանր հետեւանքներ	Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	Նախաքննություն

14	Մերուժան Հարությունյան (Ավագ լեյտենանտ)	11.05.2014	ՀՀ	Վայոց ձորի մարզի Արենի գյուղի մոտակայք	Վայոց Ձորի մարզի Վայքի զորամաս	Ոչ պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 365-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը	Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում	Նախաքննություն
15	Արթուր Օհանջանյան	20.05.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
16	Գարիկ Բալայան (Փոխգնդապետ)	25.05.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային (Ֆիզուլի) ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Ոչ պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
17	Էրիկ Գասպարյան	28.05.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային ուղղությամբ		Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	
18	Անդրանիկ Եղոյան (պայմանագրային զինծառայող)	05.06.2014	ՀՀ	Հայ-ադրբեջանական սահմանագոտու հարավ-արեւմտյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

19	Բորիս Գասպարյան (պայմանագրային զինծառայող)	05.06.2014	ՀՀ	Հայ-ադրբեջանական սահմանագոտու հարավ-արեւմտյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
20	Դերենիկ Մանուկյան	11.06.2014	ԼՂ	ՊԲ հյուսիսային (Գյուլիստան) ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ	«Եղնիկներ» զորամաս	Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 373-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ զենքի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Սպանություն /Զենքի հետ վարվելու կանոնների խախտում/	Նախաքննություն
21	Նարեկ Պողոսյան (պայմանագրային զինծառայող)	20.06.2014	ՀՀ	Հայ-ադրբեջանական սահմանագոտու հարավ-արեւմտյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	
22	Գրիշա Խաչատրյան	20.06.2014	ՀՀ	Արարատի մարզի ք. Արարատի զորամասերից մեկը		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը	Սպանություն /դիտավորյալ/	Դատաքննություն
23	Արմեն Ավետիսյան	24.06.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

24	Մովսես Գասպարյան	11.07.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավ-արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
25	Սարգիս Աբրահամյան (Մայոր)	12.07.2014	ԼՂ	Քարավաճառի տարածք		Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	
26	Գեւորգ Ավագյան	18.07.2014	ԼՂ	ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ ՊՆ քննչական ծառայություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը	Սպանություն /դիտավորյալ/	Նախաքննություն
27	Խաչատուր Բաղասյան	26.07.2014	ԼՂ	Մարտակերտի շրջանի պաշտպանական դիրքեր		Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	
28	Արմեն Հայրապետյան (Կապիտան)	29.07.2014	ԼՂ	ԼՂ, 9-րդ պաշտպանական շրջան		Ոչ պաշտոնական			Դժբախտ պատահար /ականի պայթյունի հետեւանքով/	

29	Արարատ Խանոյան	31.07.2014	ԷՂ	ԷՂ հյուսիսային հատվածում մարտական հերթապահություն իրականացնող զորամասերից մեկի պահպանության տեղամաս		Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	
30	Ազատ/Աշոտ՝ նախնական տվյալներում/ Ասոյան	31.07.2014	ԷՂ	ԷՂ հյուսիսային հատվածում մարտական հերթապահություն իրականացնող զորամասերից մեկի պահպանության տեղամաս		Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	
31	Գոռ Գրիգորյան (Լեյտենանտ)	31.07.2014	ԷՂ	ԷՂ հյուսիսային հատվածի զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական			Զենքի հետ վարվելու կանոնների խախտում	
32	Զորիկ Գեւորգյան (Ավագ լեյտենանտ)	02.08.2014	ԷՂ	ԷՂ Մարտակերտի ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ	Մարտակերտի զորամասերից մեկի պահպանության տեղամաս	Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	
33	Սարգիս Մովսիսյան	02.08.2014	ԷՂ	ԷՂ Ասկերանի ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	
34	Արամ Գրիգորյան (պայմանագրային զինծառայող)	04.08.2014	ԷՂ	Քարավաճառի տարածք		Ոչ պաշտոնական			Հրադադարի ռեժիմի խախտում	

35	Վլադիմիր Հայրապետյան	28.08.2014	ՀՀ	ՀՀ ՊՆ N զորամասի մարտական դիրքերից մեկը		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 365-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը որն առաջացրել է ծանր հետեւանքներ	Սպանություն /Մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում/	Նախաքննություն
36	Սամվել Հարությունյան	08.09.2014	ՀՀ			Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 110-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանության հասցնել	Նախաքննություն
37	Միհեր Հակոբյան (Ավագ լեյտենանտ)	18.09.2014	ԼՂ	Ղարաբաղահադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
38	Պավլիկ Մանուկյան (Կապտիան)	19.09.2014	ՀՀ	Տավուշի մարզի Արծվաբերդ գյուղի մոտակայքի ճանապարհ		Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր.-ի 377-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներ՝ մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ	Դժբախտ պատահար /ավտովթար/	Նախաքննություն

39	Դավիթ Նավասարդյան	02.10.2014	ԼՂ			Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
40	Սերգեյ Սահակյան (մայոր)	12.11.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական սահմանի արեւելյան հատվածի օդային տարածք		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,ՀՀ քր. օր-ի 185-րդ հոդված՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
41	Ազատ Սահակյան (լեյտենանտ)	12.11.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական սահմանի արեւելյան հատվածի օդային տարածք		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,ՀՀ քր. օր-ի 185-րդ հոդված՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
42	Սարգիս Նազարյան (ավագ լեյտենանտ)	12.11.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական սահմանի արեւելյան հատվածի օդային տարածք		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով,ՀՀ քր. օր-ի 185-րդ հոդված՝ գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն

43	Վիտալիկ Պողոսյան (Պայմանագրային զինծառայող)	27.11.2014	ԼՂ			Տեղեկատվություն չի տարածվել		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում	Նախաքննություն
44	Արթուր Մարգարյան	04.12.2014	ԼՂ			Պաշտոնական	ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչություն	ՀՀ քր. օր-ի 110-րդ հոդվածի 1-ին մաս՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանության հասցնել	Նախաքննություն
45	Գարիկ Իսպիրյան	08.12.2014	ԼՂ	Ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկ		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներ՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով	Հրադադարի ռեժիմի խախտում/ Դիվերսիոն հարձակում	Նախաքննություն
46	Դավիթ Քոլոյան	21.12.2014	ԼՂ	ՊԲ արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետ		Պաշտոնական		ՀՀ քր. օր-ի 110-րդ հոդվածի 1-ին մաս՝ սպառնալիքի, դաժան վերաբերմունքի կամ անձնական արժանապատվությունը պարբերաբար նվաստացնելու ճանապարհով անձին անուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ ինքնասպանության կամ ինքնասպանության փորձի հասցնելը	Ինքնասպանության հասցնել	Նախաքննություն

2014 թ. ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Հրադադարի ռեժիմի խախտում

1. Կարեն Գագիկի Գալստյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության հաղորդմամբ՝ 2014 թ-ի հունվարի 28-ին հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական դիրքում հակառակորդի դիպուկահարի կողմից արձակված գնդակից գլխի հատվածում մահացու հրազենային վիրավորում է ստացել 1994 թ. ծնված զինծառայող Կարեն Գագիկի Գալստյանը: Կարեն Գալստյանի մահվան դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:

20-ամյա Կարենը զորակոչվել էր զինծառայության Սիսիանից եւ գարնանը պիտի տուն վերադառնար: Ըստ լրատվամիջոցների կողմից տարածված տեղեկատվության՝ Կարենի ընտանիքն ապրում է սոցիալապես ծանր պայմաններում:[8]

News.am-ի հետ զրույցում Կարենի եղբայրը՝ Բաբիկ Գալստյանը, պատմել է, որ ինքը խոսել է Կարենի հետ դեպքի նախորդ օրը եւ հավաստում է, որ Կարենի տրամադրությունը բարձր էր, քանի որ մոտ 4 ամիս էր մնում ծառայության ավարտին:

Հարազատների խոսքով՝ Կարենը սիրում էր զինվորական համազգեստը եւ մտադրություն ուներ պարտադիր զինծառայությունն ավարտելուց հետո անցնել հիմնական զինվորական ծառայության:

Ըստ vorotan.am-ին[9] Կարենի քրոջ պատմածի՝ Կարենը շատ ծանր է տարել մարտական դիրքերում հակառակորդի դիվերսիայի հետեւանքով հերոսաբար զոհված Արմեն Հովհաննիսյանի մահը, եւ միաժամանակ հպարտացել է նրանով: Հենց այդ է եղել պատճառը, որ նա հրաժարվել է այդ ժամանակահատվածում իրեն տրամադրված 12-օրյա

[8] http://henaran.am/news_view.php?post_id=35245
[9] http://vorotan.am/կարենը-շատ-էր-սիրում-զինվորական-համազ/

արձակուրդից, պատճառաբանելով, որ չի կարող գնալ տուն հասգստանալ, երբ այնտեղ հերոսաբար զինվոր է մահացել:

Նրա աճյունը ամփոփվել է Սիսիանի զոհված ազատամարտիկների պանթեոնում:

ԼՂ նախագահ Բակո Սահակյանի հունվարի 30-ին հրամանագրով, ԼՂ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար, ԼՂ պաշտպանության բանակի շարքային Կարեն Գալստյանը հետմահու պարգեւատրվել է«Մարտական ծառայություն» մեդալով[10]:

2. Գառնիկ Վահանի Թորոսյան

2014 թ-ի մարտի 24-ին՝ ժամը 09:50-ի սահմանում, դարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում մարտական առաջադրանք կատարելու ժամանակ մահացու հրազենային գնդակային վիրավորում է ստացել զինծառայող, 1992 թ. ծնված Գառնիկ Վահանի Թորոսյանը:[11]

Ըստ պաշտոնական տեղեկատվության՝ Գառնիկ Թորոսյանի մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով: Միջադեպի մանրամասները պարզելու համար կատարվում է քննություն:[12]

ԳԱԼԱ-ի փոխանցմամբ՝ հրամանատարական կազմից զինծառայողի հարազատներին փոխանցել են, որ տեղի ունեցածը անզգուշության հետեւանք է. Գառնիկը գտնվել է հակառակորդի համար տեսանելի վայրում, ծառայակիցները հորդորել են նրան շատ արագ վերադառնալ, սակայն նա չի հասցրել:

«Ասում են, որ էնտեղ ինչ-որ հատված կա, որ չի թույլատրվում զինվոր դուրս գա էդտեղ, բարձրացել է էդ տեղը, գոռացել են, թե չի կարելի, հետ արի, ասել է, թե հիմա կգամ, ու կրակել են»,- պատմել է գյուղապետ Գոռ Պետրոսյանը:[13]

---

[10] http://www.kentron.tv/index.php/am/news/item/3288-news-3101.html
[11] http://nkrmil.am/main/am/newsMore672.html
[12] http://www.pastinfo.am/hy/node/36604
[13] http://www.1in.am/arm/armenia_society_260463.html

Զինվորը Նահապետավան գյուղից էր (Շիրակի մարզ): Զորակոչվել էր Արթիկի զինկոմիսարիատից:

3. Արայիկ Ռոմիկի Բաբայան

2014 թ-ի մարտի 27-ին՝ ժամը 13:10-ի սահմանում, դարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի /Մարտունի/ պահպանության տեղամասի մարտական հենակետում՝ մարտական առաջադրանք կատարելու ժամանակ մահացու հրազենային գնդակային վիրավորում է ստացել զինծառայող, 1995թ. ծնված Արայիկ Ռոմիկի Բաբայանը:[14]

Մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով: Միջադեպի մանրամասները պարզելու համար տարվում է քննություն:

Ըստ SHAMSHYAN.com-ի նախնական տվյալների՝ Ա. Բաբայանը ԼՂ Ստեփանակերտ քաղաքի բնակիչ էր: Նա զորակոչվել էր զինծառայության 2013թ. գարնանը:

4. Արթուր Սեյրանի Օհանջանյան

ԼՂ ՊԲ տեղեկացմամբ՝ 2014 թ-ի մայիսի 20-ին դարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում հակառակորդի կողմից արձակված գնդակից մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 1994 թ. ծնված Արթուր Սեյրանի Օհանջանյանը:[15]

News.am-ին ՀՀ ՊՆ քննչական հայտնել են, որ մահվան առիթով հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանությունը ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:[16]

---

[14] http://nkrmil.am/main/am/newsMore674.html
[15] http://nkrmil.am/main/am/newsMore700.html
[16] http://news.am/arm/news/210503.html

Արթուր Սեյրանի Օհանջանյանը հետմահու պարգեւատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Արթուրը Սյունիքի մարզի Բռնակոթ գյուղից էր[17]:

5. Գարիկ Էդիսոնի Բալայան (փոխգնդապետ)

Հայ-ադրբեջանական հակամարտ զորքերի առաջնագծի հարավային ՝ (Ֆիզուլի) ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում 2014 թ-ի մայիսի 25-ին հակառակորդի դիպուկահարից զոհվել է փոխգնդապետ Գարիկ Էդիսոնի Բալայանը:[18]

«Փաստինֆո»-ին ՀՀ ՊՆ քննչական ծառայությունից հայտնել են, որ մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:[19]

Նույն՝ Ֆիզուլի հենակետում 2014թ. մայիսի 26-ին հակառակորդի կողմից արձակված գնդակից ձեռքի միջին ծանրության հրազենային վիրավորում է ստացել զինծառայող Աշոտ Ալիկի Գրիգորյանը: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով (սպանության փորձը՝ ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով):

Փոխգնդապետ Գարիկ Բալայանը հետմահու պարգեւատրվել է «Արիության համար» մեդալով[20]:

6. Անդրանիկ Սամվելի Եղոյան (պայմանագրային զինծառայող)

7. Բորիս Բենիկի Գասպարյան (պայմանագրային զինծառայող)

ՀՀ ՊՆ մամուլի ծառայությունից ստացված տեղեկության համաձայն՝2014 թ-ի հունիսի 5-ին, հայ-ադրբեջանական սահմանագոտու հարավ-արեւմտյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում

---

[17] http://www.youtube.com/watch?v=Pl-xmkWHyGg
[18] http://nkrmil.am/main/am/newsMore705.html
[19] http://pastinfo.am/hy/node/42249
[20] http://razm.info/46286

հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացու հրազենային գնդակային վիրավորում են ստացել պայմանագրային զինծառայողներ 1988 թ-ին ծնված Անդրանիկ Սամվելի Եղոյանը եւ 1992 թ-ին ծնված Բորիս Բենիկի Գասպարյանը:[21]

Զինծառայողների մահվան փաստով քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 2-րդ մասի 13 կետով՝ սպանություն ազգային, ռասայական, կամ կրոնական ատելության, կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:[22]

Անդրանիկը Արարատ քաղաքից էր: 1in.am-ին[23] Անդրանիկի հորեղբոր որդու՝ Աշոտ Եղոյանի պատմելով՝ առավոտից դիպուկարահարը անդադար կրակել է: «Երբ հնարավոր եղավ Անդրանիկին իջեցնել, դեռ զարկերակը կար, խփում էր, կար, ինքը էլ չէր խոսում, աչքերն էլ բաց էին», ասել է Աշոտը, հավելելով, որ նա հենակետում չի եղել, հենակետի ավագի օգնական է եղել: Երբ դուրս է եկել զուգարանից, կրակել են:

Անդրանիկի հարազատ եղբայրն էլ նշեց, որ այդ կողմի ամենավտանգավոր հենակետն է եւ «Գազան պոստ» է կոչվում:

8. Արմեն Արթուրի Ավետիսյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության փոխանցմամբ՝ 2014 թ-ի հունիսի 24-ին ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում հակառակորդի գնդակից մահացու վիրավորում է ստացել զինծառայող, 1995 թ-ին ծնված Արմեն Արթուրի Ավետիսյանը:[24]

Ըստ shamshyan.com-ին[25] ՀՀ ՊՆ քննչական ծառայությունից հայտնած տեղեկատվության՝ զինվորի մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի հատկանիշներով՝ սպանություն՝ ազգային, ռասսայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով:

---

[21] http://www.mil.am/1401970845
[22] http://armlur.am/179497/
[23] http://www.1in.am/1318783.html
[24] http://nkrmil.am/main/am/newsMore719.html
[25] http://shamshyan.com/hy/article/18823/

Մահացած զինծառայողը Գեղարքունիքի մարզի Նորատուս գյուղից էր: 1in.am-ին նրա ընկերները պատմել են, որ նա սոցիալապես անապահով ընտանիքից էր, գյուղացիներն են միշտ օգնել՝ ով ինչով կարողացել է:[26]

Արմեն Ավետիսյանը հետմահու պարգեւատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

9. Մովսես Նորայրի Գասպարյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության տեղեկացմամբ՝ 2014 թ-ի հուլիսի 11-ին ժամը 15:00-ի սահմաններում դարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավ-արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում ադրբեջանական կողմից հրազենային գնդակային մահացու վիրավորում է ստացել զինծառայող, 1994 թ. ծնված Մովսես Նորայրի Գասպարյանը:

Զինծառայողի մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով (ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով)[27]:

News.am-ի տվյալների համաձայն՝ Մովսեսն ընտանիքի հետ բնակվում էր Ռուսաստանի Տյումեն քաղաքում, Հայաստան էր եկել՝ ծառայելու համար:

Հարեւանների խոսքերով՝ Մովսեսի եղբայրը մի քանի ամիս առաջ էր զորացրվել, նույն զորամասում է ծառայել, ինչ եղբայրը: Մովսեսը դեպքից օրեր առաջ արձակուրդ է եկել, օրերն էր հաշվում, թե երբ է զորացրվելու:

Ժամկետային զինծառայողը ԼՂ նախագահ Բակո Սահակյանի կողմից հետմահու պարգեւատրվել է «Մարտական ծառայության» մեդալով[28]:

10. Արամ Մկրտիչի Գրիգորյան (պայմանագրային զինծառայող)

News.am լրատվական կայքի փոխանցմամբ Քարվաճառի շրջանում 2014 թ-ի օգոստոսի 4-ին զոհվել է պայմանագրային զինծառայող Արամ Գրիգորյանը[29]:

---

[26] http://shamshyan.com/hy/article/18823/
[27] http://armlur.am/199575/
[28] http://www.president.nkr.am/am/news/lawsOrders/2504/
[29] http://news.am/arm/news/222460.html

42-ամյա զինծառայողն Արագածոտնի մարզից էր, մարտական հենակետ էր գնացել դեպքից 2 օր առաջ: Ըստ news.am-ին Արամի Գրիգորյանի եղբոր կնոջ փոխանցած տվյալների՝ նա որպես պայմանագրային զինածառայող 24 տարի ծառայել է ԼՂ տարբեր շրջաններում, մասնակցել է Արցախյան ազատամարտին, կռվել է Մոնթեի ջոկատում: Նրա կնքած պայմանագրից երկու ամիս անցել էր, բայց զինծառայողն ուզում էր եւս երկու տարի հայրենիքը պաշտպանել, այնուհետեւ անցնել թոշակի[30]:

ՀՀ նախագահի հրամանագրի համաձայն ավագ սերժանտ Արամ Մկրտիչի Գրիգորյանը հետմահու պարգեւատրվել է Մարտական ծառայության մեդալով[31]:

11. Մհեր Հովհաննեսի Հակոբյան (ավագ լեյտենանտ)

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության փոխանցմամբ 2014 թ-ի սեպտեմբերի 18-ին ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում ադրբեջանական գնդակից մահացու վիրավորում է ստացել զինծառայող, 1990 թ-ին ծնված Մհեր Հովհաննեսի Հակոբյանը.[32]

Մհեր Հակոբյանի մահվան դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով (ազգային, ռասայական կամ կրոնական ատելության կամ կրոնական մոլեռանդության շարժառիթով սպանությունը):
Նախաքննությունը շարունակվում է:

ԼՂ նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով ավագ լեյտենանտ Մհեր Հակոբյանը հետմահու պարգեւատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով[33]:

12. Դավիթ Վիկտորի Նավասարդյան (պայմանագրային զինծառայող)

ԼՂ ՊԲ մամուլի ծառայությունը հոկտեմբերի 2-ին տեղեկատվություն տարածեց այն մասին, որ նախօրեին՝ հոկտեմբերի 1-ին, ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի

---

[30] http://news.am/arm/news/222568.html
[31] http://www.aysor.am/am/news/2014/08/06/serzh-sargsyan/
[32] http://hasarakutyun.am/?p=66420
[33] http://galatv.am/hy/news/her-akobyany-hetmahu-pargewatrvel-e-artakan-carayutyun-medalov/

պահպանության տեղամասի մարտական հենակետում հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացու վիրավորում է ստացել 1976թ. ծնված պայմանագրային զինծառայող՝ Դավիթ Վիկտորի Նավասարդյանը։[34]

Զինծառայողի մահվան փաստի առնչությամբ ՀՀ Քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104–րդ հոդվածի 2–րդ մասի 13–րդ կետով՝ ազգային ատելության շարժառիթով դիտավորությամբ սպանության հատկանիշներով: Կատարվում է նախաքննություն[35]:

ԼՂ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար կրտսեր սերժանտ Դավիթ Նավասարդյանը ԼՂ նախագահ Բակո Սահակյանի հրամանագրով հետմահու պարգեւատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով[36]:

13. Սերգեյ Սահակյան (մայոր)

14. Ազատ Սահակյան (լեյտենանտ)

15. Սարգիս Նազարյան (ավագ լեյտենանտ)

2014թ. նոյեմբերի 6-ին ԼՂ-ում մեկնարկեցին «Միասնություն 2014» օպերատիվ մարտավարական զորավարժությունը, որում ներգրավված էին բոլոր զորատեսակներն ու շուրջ 47 000 հոգանոց անձնակազմ՝ ՀՀ զինված ուժերից եւ ԼՂ Պաշտպանության բանակից[37]:

Զորավարժությունների մեկնարկից մոտ մեկ շաբաթ անց՝ նոյեմբերի 12-ին, ղարաբաղաադրբեջանական սահմանի արեւելյան հատվածի օդային տարածքում ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական զինված ուժերը՝ խախտելով հրադադարի ռեժիմը, խոցեցին ԼՂ ռազմաօդային ուժերի ՄԻ-24 ուղղաթիռը:

Խոցման հետեւանքով զոհվեցին ուղղաթիռի անձնակազմի բոլոր 3 անդամները՝ ուղղաթիռի հրամանատար մայոր Սերգեյ Սահակյանը, լեյտենանտ Ազատ Սահակյանը եւ ավագ լեյտենանտ Սարգիս Նազարյանը:

---

[34] http://nkrmil.am/main/am/newsMore803.html
[35] http://news.am/arm/news/231962.html
[36] http://replik.am/arm/index.php?id=46914
[37] http://razm.info/56101

Հայկական կողմին տեւական ժամանակ չեր հաջողվում ինքնաթիռի անկման վայրից տարհանել զոհված սպաների դիերը, քանի որ ադրբեջանական կողմից չէին դադարում անընդհատ հնչող կրակոցները:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի ղեկավար Արթուր Սաքունցը՝ մեկնաբանելով իրավիճակը, կարծիք է հայտնել, որ հայկական կողմը խոցված ուղղաթիռի հարցով պետք է առաջին հերթին աշխատի ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հետ[38]:

Նոյեմբերի 23-ին, անուամենայնիվ, հայկական կողմին հաջողվեց չեզոք գոտուց դուրս բերել ուղղաթռի անձնակազմի անդամների դիերը[39]:

Ադրբեջանի կողմից նման սադրանքը բուռն քննադատության ալիք բարձրացրեց նաեւ միջազգային հանրության շրջանում:

ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները հանդես եկան համերաշխության հաստատման եւ վստահության ամրապնդմանն ուղղված միջոցների կոչով[40]: Վերահաստատելով իր աջակցությունը ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին, Եվրամիությունը եւս հայտարարություն տարածեց՝ կոչ անելով կողմերին՝ հարգել հրադադարի ռեժիմը, զերծ մնալ ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից[41]:

Ֆրանսիա-Ղարաբաղ Բարեկամության շրջանակի նախագահ Ֆրանսուա Ռոշբլուանը դատապարտելով այս նոր բռնության պոռթկումը, արձանագրեց, որ «Ինչպես միշտ, այս անգամ եւս այն ադրբեջանական վարչակազմի ձեռքի գործն է»[42]:

Իսկ Ամերիկայի Հայ դատի հանձնախումբն (ANCA) ԱՄՆ-ի Կոնգրեսին կոչ է արել դատապարտել Բաքվի հարձակումը ղարաբաղյան օդուժի անզեն ուղղաթիռի վրա:[43]

Իտալիայի «Առա՛ջ, Իտալիա» (Forza Italia) կուսակցությունը հայտարարություն է տարածել ադրբեջանական զինուժի կողմից ԼՂ ՊՆ ուղղաթիռի խոցման կապակցությամբ, որում, մասնավորապես, ասված է. «Դատապարտում ենք այս ագրեսիան՝ որպես բացահայտ սադրանք: Առավել եւս, որ հայկական աղբյուրները հաստատում են, որ զորավարժության ընթացքում ուղղաթիռում զենքեր չեն եղել»[44]:

---

[38] http://medialab.am/news/id/6035
[39] http://mitk.am/2014/11/25/ուղղաթիռի-խոցումը-հակամարտության-ավ/
[40] http://www.osce.org/mg/12663
[41] http://www.azatutyun.am/archive/news/20141112/2031/2031.html?id=26688842
[42] http://galatv.am/hy/news/ocvel-e-gharabaghyan/
[43] http://armedia.am/?action=NKR&what=show&id=1247176245&lang=arm
[44] http://hraparak.am/?p=66988&l=am/datapartum+enq+ays+agresian%D5%9Dvorpes+bacahayt+sadranq+forza+italia

Իսկ ահա «Ռուս-հայկական համագործակցության» փորձագետ Դենիս Դվորնիկովը կարծիք է հայտնել, որ «Ադրբեջանն ի զորու չէ փակելու Արցախի երկինքը»: «Եթե ղարաբաղյան ուղղաթիռն իրոք սպառազինված լիներ, ապա Ադրբեջանի ղեկավարության համար կարեւոր կլիներ որքան հնարավոր է շուտ դա ի ցույց դնել միջազգային հանրությանը[45]:

Դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ ազգային ատելության շարժառիթով երկու եւ ավելի անձանց սպանության, գույքը դիտավորյալ ոչնչացնելու համար[46]:

ԳԱԼԱ-ն մեջբերելով Սեյրան Օհանյանի խոսքերը, նշել է, որ բացի ծառայողական քննությունից, նաեւ մասնագիտական քննություն է իրականացվելու՝ պարզելու դեպքի բոլոր հանգամանքները:

Արծրուն Հովհաննիսյանի հավաստմամբ՝ ստեղծվել էր հանձնաժողով գլխավոր շտաբի տեղակալներից մեկի ղեկավարությամբ, եւ սկսվել էր քննությունը: Փորձաքննության են ուղարկվել ուղղաթիռի մասերը, որոնք բերել են չեզոք գոտուց: Խոցված ուղղաթիռի սեւ արկղերը եւս վերծանվելու են հայ մասնագետների կողմից:

Արդեն իսկ սույն թվականի դեկտեմբերի 21 լրագրողների հետ հանդիպման ժամանակ պաշտպանությաննախարարը նշել է, որ ուղղաթիռի հարցով ծառայողական քննությունն ավարտվել է, հարուցված քրեական գործով ԼՂ բանակի ղեկավարությունը եւ իրավապահ մարմիններն աշխատում են[47]:

16. Վիտալիկ Պողոսյան (պայմանագրային զինծառայող)

2014 թ-ի նոյեմբերին ԼՂ նախագահի պաշտոնական կայքից տեղեկացել ենք, որ ԼՂ նախագահի նոյեմբերի 27-ի հրամանագրով ԼՂ պաշտպանության բանակի N զորամասի շարքային (պայմանագրային) **Վիտալիկ Պողոսյանը** հետմահու **պարգեւատրվել է** «Մարտական ծառայություն» մեդալով, սակայն որի մահվան վերաբերյալ մինչ այդ որեւէ տեղեկատվություն չէր տարածվել: Հարկ է նշել, որ Բակո Սահակյանի կողմից ստորագրված հրամանագրում միայն նշվում է, որ զինծառայողը պարգեւատրվել է «ԼՂ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար»:[48]

---

[45] http://neonews.am/hy_AM/news/article/view/3/50767/

[46] http://galatv.am/hy/news/zgayin-atelutyan-sharjharitov-erku-ew-aveli-andanc-spanutyun-harucvac-qreakan-gorcy-kparzi-um-hramanov-ein-tghanery-durs-ekel-chezoq-goti/

[47] http://yerevannews.am/?p=32221&l=am/xocvacvo%D6%82xxatiri+carayoxakan+qnutyun+avartvel+e

[48] http://www.president.nkr.am/am/news/lawsOrders/2654/

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2014թ. դեկտեմբերին ՀՀ ՊՆ հասցեագրված հարցմամբ փորձել է պարզել դեպքի մանրամասները: ՊՆ-ից ստացված գրությամբ հայտնվում է, որ զինծառայողի մահվան փաստի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ: Իսկ պահանջված տեղեկատվությունը այն մասին, թե երբ է տեղի ունեցել դեպքը և որ թվականին, ՊՆ-ն համարում է գաղտնի տեղեկատվություն:

Այնուամենայնիվ, կազմակերպությանը դեպքի մասին մանրամասներ տրամադրվեց ՀՀ զինվորական դատախազության կողմից՝ 2015թ. հունվարի 27-ին, ի պատասխան 2014 թ. դեկտեմբերի 24-ին ուղարկված հարցման: Գրությամբ մասնավորապես տեղեկացվել է, որ պայմանագրային զինծառայող Վիտալի Էդիկի Պողոսյանը զոհվել է ադրբեջանական կողմից արձակված կրակոցից 2014թ. նոյեմբերի 9-ին՝ մարտական դիրքի թիկունքային հատվածում ինժեներական աշխատանքներ կատարելիս: Զինծառայողը հրազենային վիրավորում է ստացել որովայնի շրջանում, ինչի հետևանքով տեղում մահացել է:

ՀՀ զինդատախազությունից նաև տեղեկացվել է, որ փաստի առթիվ նույն օրը՝ 2014 թ. նոյեմբերի 9-ին ՀՀ Քննչական կոմիտեի ԶՔԳՎ առաջին կայազորային քննչական բաժնում հարցուցվել է քրեաան գործ՝ ՀՀ քրեական օրենքգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով: Նախաքննությունը շարունակվում է:

Դիվերսիայի հետեւանքով մահացություններ

17. Արմեն Լեւոնի Հովհաննիսյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության տեղեկացմամբ՝ 2014 թ. հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը դարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսարեւելյան (Զրաբերդ) եւ հարավարեւելյան (Կորգան) ուղղություններում արձանագրվել են հակառակորդի դիվերսիոն խմբերի ներթափանցման միաժամանակյա փորձեր: Բռնկված փոխհրաձգության արդյունքում հակառակորդի կողմից ստացած հրազենային վիրավորումից՝ հյուսիսարեւելյան ուղղությամբ տեղակայված մարտական դիրքում զոհվել է կրտսեր սերժանտ 1994 թ-ին ծնված Արմեն Լեւոնի Հովհաննիսյանը:[49]

[49] http://nkrmil.am/main/am/newsMore652.html

Արմեն Հովհաննիսյանը, զգուշացնելով իր ծառայակիցներին դիվերսանտների ներթափանցման մասին, սկսել է դիմադրությունը հակառակորդի մեծ խմբի դեմ: Նույնիսկ ծանր վիրավորված լինելով՝ նա շարունակել է պայքարել: Հարազատների խոսքերով Արմենը վիրավորվել է 10-12 տեղից: Իսկ նրա մարտական ընկերները պատմել են, որ մոտ կես ժամ Արմենը միայնակ է դիմադրություն է ցույց տվել եւ մի քանի հոգու կյանք փրկել:

ԼՂ նախագահի կողմից հետմահու պարգեւատրվել է «Արիության համար» մեդալով:

Արմեն Հովհաննիսյանին հուղարկավորել են Եռաբլուր զինվորական պանթեոնում:[50]

18. Էրիկ Վիլենի Գասպարյան

Ըստ ԼՂ ՊԲ տարածած տեղեկատվության՝ 2014 թ-ի մայիսի 27-ի լույս 28-ի գիշերը՝ ժամը 02:55-ի սահմաններում, դարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային ուղղությամբ հակառակորդը ձեռնարկել է հերթական հետաուզադիվերսիոն ներթափանցման փորձ:

ՊԲ առաջապահ ստորաբաժանումները, դիմել են պատասխան գործողությունների եւ հետ մղել նրաց ելման դիրքեր: Հակառակորդ գրոհայիններին դիմակայելու ընթացքում պաշտպանության բանակը ունեցել է մեկ կորուստ: Ծավալված մերձամարտում զոհվել է ՊԲ զինծառայող, եֆրեյտոր, 1995թ. ծնված Էրիկ Վիլենի Գասպարյանը.[51]

19. Նարեկ Կարոյի Պողոսյան (պայմանագրային զինծառայող)

Times.am-ի փոխանցմամբ 2014 թ-ի հունիսի 20-ի լույս առավոտյան հերթական դիվերսիան է կազմակերպվել Արցախի երրորդ պաշտպանական շրջանի ուղղությամբ (Մարտունիի շրջան): Հայկական կողմը կարողացել է խափանել հակառակորդի դիվերսիան: Դիվերսիայի արդյունքում զոհվել է 1988 թ-ին ծնված պայմանագրային զինծառայող ավագ սերժանտ Նարեկ Կարոյի Պողոսյանը:[52]

Դեպքի մասին այլ մանրամասներ չեն նշվում:

---

[50] http://www.panorama.am/am/current_topics/2014/01/22/armen-hovhannisyan/
[51] http://nkrmil.am/main/am/newsMore706.html
http://razm.info/45092
[52] http://times.am/?p=43352&l=am

20. Սարգիս Սամվելի Աբրահամյան (մայոր)

2014 թվականի հուլիսի սկզբին մամուլում տարածվեց տեղեկատվություն այն մասն, որ ԼՂ սահման է ներթափանցել ադրբեջանական հետախուզադիվերսիոն խումբ, ովքեր առեւանգել եւ սպանել են Քարվաճառի տարածքի 17-ամյա բնակիչ Սմբատ Ցականյանին, որի դին հայտնաբերվել է հուլիսի 15-ին՝ գլխի շրջանում հրազենային մահացու վիրավորումով:[53]

ՊՆ-ի «Ազատության»-ը փոխանցած տվյալների համաձայն՝ հուլիսի 11-ին ժամը 18:00-ի սահմաններում Քարվաճառի տարածքում ադրբեջանահայկական սահմանը հատած դիվերսանտը հարձակվել է ճանապարհով ընթացող «Նիվա» մակնիշի քաղաքացիական համարանիշներով ավտոմեքենայի վրա, սպանել մեքենայում գտնվող 42-ամյա մայոր Սարգիս Աբրահամյանին եւ վիրավորել եւս 1 սպայի կնոջ՝ 37-ամյա Կարինե Դավթյանին: Վերջինս աչքի շրջանում հրազենային վնասվածքով տեղափոխվել է Մուրացանի զինվորական հոսպիտալ[54]:

Դիվերսանտը (Հասան Հասառովը) փորձել է նույն ավտոմեքենայով դիմել փախուստի, սակայն հայ դիրքապահները կասեցրել են ավտոմեքենայի ընթացքը եւ փոխհրաձգության ժամանակ *ոչնչացրել* դիվերսանտին[55]:

2014թ. հոկտեմբերի 27-ին Ստեփանակերտի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում սկսվել էր ղարաբաղաադրբեջանական սահմանն ապօրինի հատած զինված ադրբեջանցիներ Իլհամ Ասկերովի եւ Շահբազ Գուլիեւի դատաքննությունը, որոնց մեղադրանքներ են առաջադրվել ԼՂ Քրեական Օրենսգրքի մի շարք հոդվածներով:

Ասկերովը ընդունել է 2014 թ. Շահբազ Գուլիեւի եւ Հասան Հասանովի հետ սահմանն ապօրինի հատելու մեղադրանքը:

2014թ. դեկտեմբերի 29-ին Ասկերովն ու Գուլիեւը դատապարտվել են համապատասխանաբար ցմահ եւ 22 տարվա ազատազրկման՝ լրտեսության, առանց պատշաճ թույլտվության Լեռնային Ղարաբաղի պետական սահմանը հատելու, ապօրինի կերպով հրազեն եւ ռազմամթերք կրելու, մարդուն բացահայտ առեւանգելու եւ սպանության համար[56]:

---

[53] http://news.am/arm/news/219240.html
[54] http://galatv.am/hy/news/87697890567805/
[55] http://www.azatutyun.am/content/article/25454702.html
[56] http://www.azatutyun.am/content/news/26779250.html

21. Խաչատուր Լեւոնի Բաղասյան

2014 թ-ի հուլիսի 26-ին ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսային եւ հյուսիս-արեւելյան ուղղություններով ադրբեջանական կողմի ձեռնարկած դիվերսիոն հետախուզական ներթափանցման փորձերի արդյունքում հրազենային մահացու վիրավորում է ստացել ժամկետային զինծառայող, 1994 թ. ծնված, Խաչատուր Լեւոնի Բաղասյանը:

Զինծառայողը Տավուշի մարզի Հաղթանակ գյուղի 19-ամյա բնակիչ էր:[57]

Գյուղապետի խոսքերով՝ Խաչատուրը 1,5 տարվա ծառայող էր: Նա խիստ անապահով ընտանիքից էր, տուն չունեին[58]:

Նախագահ Բակո Սահակյանը հուլիսի 26-ին ստորագրել է հրամանագիր, համաձայն որի՝ ԼՂ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար ԼՂ պաշտպանության բանակի N զորամասի շարքային Խաչատուր Բաղասյանը հետմահու պարգեւատրվել է «Արիության համար» մեդալով[59]:

22. Արարատ Վաչիկի Խանոյան

23. Ազատ /Աշոտ/ Արթուրի Ասոյան

ԼՂ ՊԲ մամուլի ծառայության տարածած տեղեկատվության համաձայն 2014 թ-ի հուլիսի 31-ին ադրբեջանական կողմը ձեռնարկել է հարձակում ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետի ուղղությամբ: Հայկական կողմին հաջողվել է դիվերսանտներին հետ մղել իրենց ելման դիրքեր: Մարտական գործողությունների ժամանակ, սակայն, զոհվել են ՊԲ երկու զինծառայողներ՝ 1994 թ. ծնված Արարատ Վաչիկի Խանոյանը (Արմավիրի մարզի Սարդարապատ գյուղից) եւ Աշոտ Արթուրի Ասոյանը (Երեւանից)[60]:

Ազատի ծառայակից ընկերներից մեկը news.am-ի հետ զրույցում ասել է, որ Ազատը չէր վախենում դիրքեր բարձրանալուց: Հաճախ անձամբ է խնդրել, որ իրեն դիրքեր տանեն,

[57] http://www.aravot.am/2014/07/26/483456/
[58] http://news.am/arm/news/221034.html
[59] http://www.times.am/?p=44613&l=am/arcaxum+zohvac+sharqayiny+hetmahu+pargevatrvel+e+ariutyan+hamar+medalov
[60] http://razm.info/50376

երբ իր հերթը չի եղել: Մարտական հենակետում շատ ուշադիր էր ու զգոն: Նույնիսկ դեպք է եղել, երբ խրամատում կանգնելու իր հերթը չի եղել, բայց ընկերներից մեկի հիվանդ լինելու պատճառով Ազատը փոխարինել է նրան՝ ձմռանը հինգ ժամ կանգնելով խրամատում[61]:

Իսկ Արմավիրի մարզի Սարդարապատի գյուղապետը զրուցելով Արարատ Խանոյանի մարտական ընկերների հետ՝ պարզել է, թե ինչպես է տեղի ունեցել դեպքը: Նրա խոսքերով հայ զինծառայողները ձեռնամարտի են բռնվել ադրբեջանական դիվերսանտների հետ, որոնք փորձել են գերեվարել վերջիններիս: Նրանք փոքրաթիվ բանակով հերոսաբար կռվել են եւ կարողացել են հետ մղել դիվերսանտներին, սակայն Արարատն ու Ազատը զոհվել են, իսկ նրանց ծառայակից ընկերը՝ Նորայր Քամալյանը, վնասվածք է ստացել դեմքի շրջանում:

Զորամասի հրամանատար, անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, փոխգնդապետ Բալայանի խոսքերով՝ «Դիվերսիոն խմբերը հարձակվել են ճանապարհին՝ կածանի վրա, իրենք մարտնչել են, մեկի մոտ է զենք եղել, այն էլ չի հասցրել: Չորսով են եղել, երկուսը մահացել են, մեկը վիրավորվել է, իսկ չորրորդին ոչինչ չի եղել» [62]:

Շարքային Ազատ Արթուրի Ասոյանը, սերժանտ Արարատ Վաչիկի Խանոյանը ՀՀ նախագահի հրամանագրով պարգեւատրվել են Մարտական ծառայության մեդալով, իսկ Նորայր Միքայելի Քամալյանը՝ Արիության մեդալով[63]:

24. Զորիկ Ժիրայրի Գեւորգյան (Ավագ լեյտենանտ)

2014 թ-ի օգոստոսի 1-ի լույս 2-ի գիշերը դարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսարեւելյան /Մարտակերտի/ ուղղությամբ Ադրբեջանի կողմից հերթական անգամ ձեռնարկվել է հետախուզադիվերսիոն գործողություն: ՊԲ տեղեկացմամբ[64], առաջապահ ստորաբաժանումները ադրբեջանական կողմին պատճառելով մարդկային (3 զոհ, 7 վիրավոր) եւ նյութական կորուստներ, նրանց հետ են շպրտել ելման դիրքեր: Դիմակայության ընթացքում հայկական կողմը, ցավոք, եւս ունեցել է զինծառայողի կորուստ՝ 1989թ. ծնված ավագ լեյտենանտ Զորիկ Գեւորգյանը: Զորիկ Գեւորգյանը Վանաձորից էր:

---

[61] http://news.am/arm/news/222586.html
[62] http://www.1in.am/1389690.html
[63] http://www.aravot.am/2014/08/02/485309/
[64] http://razm.info/50567

Դեպքի մանրամասները ճշտելու համար տարվում է քննություն:

Ավագ լեյտենանտ Զորիկ Գեւորգյանը ՀՀ նախագահի հրամանգրով հետմահու պարգեւատրվել է «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանով, իսկ ԼՂ նախագահի հրամանագրով հետմահու պարգեւատրվել է «Արիության համար» մեդալով[65]:

25. Սարգիս Բարմենի Մովսիսյան

ՀՀ ՊՆ մամուլի խոսնակը Ֆեյսբուք սոցիալական կայքի իր էջում գրառում է կատարել այմ մասին, որ 2014 թ-ի օգոստոսի 3-ին հոսպիտալում (ՊՆ Կենտրոնական հոսպիտալ) մահացել է օգոստոսի 2-ի դիվերսիայի հետեւանքով վիրավորված կրտսեր սերժանտ ծնված 1994 թ. Սարգիս Բարմենի Մովսիսյանը: Զինվորը մահացել է գիշեր՝ը մի քանի ժամ տեւած վիրահատության ընթացքում[66]:

Ինչպես նախօրեին հայտնել էր ԼՂ ՊԲ մամուլի ծառայությունը՝ օգոստոսի 2-ին ժամը՝ 23:00-ի սահմաններում, ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի արեւելյան /Ասկերանի/ ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի վրա ադրբեջանական կողմը ձեռնարկել էր հետախուզադիվերսիոն ներթափանցման հերթական փորձ:[67]

ՀՀ ՊՆ Կենտրոնական հոսպիտալում մահացած 20-ամյա Սարգիս Մովսիսյանը Արմավիրի մարզի Մայիսյան գյուղից էր: Հոսպիտալի պետ Արամ Ասատուրյանը news.am-ի հետ զրույցում հայտնել է, որ զինծառայողի թոքերը, երիկամն ու ողնաշարն էր վնասվել: Սարգսի հորեղբոր՝ Եսայի Մովսիսյանի խոսքերով, որը Մայիսյան գյուղի գյուղապետն է, Սարգիսն իրենից մեծ եղբայր ուներ, իսկ ծնողները բնակվում են Ռուսաստանում[68]:

ՀՀ եւ ԼՂ նախագահները հրամանագրեր են ստորագրել, համաձայն որոնց կրտսեր սերժանտ Սարգիս Մովսիսյանը հետմահու պարգեւատրվել է Արիության մեդալով[69]:

26. Գարիկ Արտեմի Իսպիրյան

---

[65] http://www2.slaq.am/arm/news/210905/
[66] http://lurer.com/?p=152236&l=am
[67] http://www.7or.am/am/news/view/72458/
[68] http://lurer.com/?p=156655&l=am
[69] http://operativ.am/?p=87118/ , http://lurer.com/?p=152241&l=am

2014 թ-ի դեկտեմբերի 8-ին, դարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում, հակառակորդի կողմից արձակված կրակոցից մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 1995 թ-ին ծնված Գարիկ Արտեմի Իսպիրյանը[70]:

ՀՀ քննչական կոմիտեի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժին տարածած տեղեկատվության համաձայն Գարիկ Իսպիրյանի մահվան առնչությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետով եւ կատարվում է նախաքննություն[71]:

ԼՂ նախագահի մամլո խոսնակի կողմից Իրավաբան.net-ին տրամադրած տեղեկատվության համաձայն տեղի է ունեցել դիվերսիա, ըստ որի Ադրբեջանի կողմից արձակվող կրակոցների արդյունքում գրանցվել է մահվան 1 դեպք[72]: Tert.am-ի տվյալներով, ադրբեջանական կողմը ունեցել է 5-7 զոհ[73]:

ԼՂ նախագահի դեկտեմբերի 9-ին Գարիկ Արտեմի Իսպիրյանը հետմահու պարգեւատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով[74]:

Բ. Առողջական խնդիրների/ոչ պատշաճ բժշկական ծառայության տրամադրման հետեւանքով մահվան դեպքեր

1. Հայկ Հովհաննեսի Մակարյան

2014 թ-ի հունվարի 14-ի լույս 15-ի գիշերը ՊԲ հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկում հիվանդության պատճառով մահացել է զինծառայող, 1993թ. ծնված Հայկ Հովհաննեսի Մակարյանը:[75]

ՀՀ ՊՆ քննչական ծառայության ավագ սպա Մերի Սարգսյանի խոսքերով[76] *Հայկ Մակարյանի մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի*

---

[70] http://galatv.am/hy/news/akarakordi-koghmic-ardakvac-krakocic-1995t-cnvac-hay-zincarayogh-e-zohvel/
[71] http://www.a1plus.am/1354801.html
[72] http://iravaban.net/72438.html
[73] http://www.yerkirmedia.am/?act=news&lan=hy&id=23468
[74] http://www.president.nkr.am/am/news/lawsOrders/2662/
[75] http://nkrmil.am/main/am/newsMore648.html
[76] http://www.pastinfo.am/hy/node/31117

376-րդ հոդվածի 1-ին մասով՝ ծառայության նկատմամբ պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքը, որը պատճառել է էական վնաս:

News.am-ին Հայկի ծանոթների փոխանցմամբ՝ նախնական տեղեկություններով, Հայկը ներքին օրգանների հետ կապված խնդիր է ունեցել, հունվարի 14-ի գիշերը նրան տեղափոխել են Ալաշանի հոսպիտալ, իսկ լույս 15-ի գիշերը մահացել է:

Պաշտպանության նախարարի խոսքերով՝ ըստ նախնական տեղեկությունների, Հայկ Մակարյանի մահվան պատճառը կայծակնային արագությամբ զարգացած մենինգիտն է: Ըստ նրա՝ զինծառայողը դիմել է բուժօգնություն ստանալու համար, սակայն ուշ է դիմել, եւ հնարավոր չի եղել նրան փրկել, քանի որ հիվանդությունը շատ արագ է զարգացել:[77]

«Հայկական ժամանակ» թերթի տվյալներով՝ Հայկ Մակարյանի մահվան փաստով նշանակված ծառայողական քննության արդյունքներով նկատողություն է հայտարարվել զորամասի բժշկական ծառայության պետին:[78]

2. Էդիկ Լյովայի Շահնազարյան

ՊՆ քննչական ծառայությունից news.am-ին հայտնած տեղեկությունների համաձայն՝ 2014 թ-ի հունվարի 20-ին, ժամը 08-00-ի սահմաններում Վաղարշապատի հիվանդանոցում մահացել է ՀՀ ՊՆ N զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող Էդիկ Լյովայի Շահնազարյանը: Փաստի առնչությամբ հարուցվել քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգքրի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետեւանքներ: [79]

Զինծառայողը զինծառայության էր զորակոչվել 2014 թ-ի հունվարի 13-ին՝ Նոյեմբերյանի զինկոմիսարիատից, ծառայության է անցել Էջմիածնի զորամասերից մեկում: Նա հասցրել է ծառայել ընդամենը մեկ շաբաթ:

1in.am-ի տեղեկացմամբ՝ Էդիկը Տավուշի մարզի Կոթի գյուղից էր: Կոթիի գյուղապետ Ֆելիքս Մելիքյանի խոսքերով՝ Էդիկն ուներ իրենից մեծ մեկ քույր եւ եղբայր: Նկարագրելով Էդիկին՝ նա նշեց, որ տղան կռվարար չէր, ընկերասեր էր, ակտիվ, տարեկիցների շրջանում հարգված եւ դաստիարակված երեխա էր:[80]

---

[77] http://www.a1plus.am/1293479.html
[78] http://news.am/arm/reviews/7967.html
[79] http://m.news.am/arm/news/190105.html
[80] http://m.1in.am/arm/armenia_society_245406.html

Զինծառայողի հայրը՝ Լյովա Շահնազարյանը, ասել է, որ ինքը որդու մահվան նախորդ օրը երեկոյան է խոսել որդու հետ: «Իրիկունը ժամը հինգին եմ խոսել, ասաց՝ լավ եմ պա, բայց մի երկու օրով ինձ սանչաստ են տանելու, վատ եմ զգում: Դա վերջն է եղել, հետո առավոտյան արդեն իմացանք, որ երեխան մահացել է»:[81]

Դեպքից մեկ ամիս անց Էդիկ Շահնազարյանի իրավահաջորդ, նրա հորեղբայր Շիրակ Շահնազարյանը, news.am-ին տված իր պարզաբանումներում նշել է, որ ըստ տարված քննության՝ զինվորի մահվան պատճառը պատվաստումն էր, որից հետո սրացում է եղել, սակայն բուժկետի պետը հավուր պատշաճի ուշադրություն չի դարձրել դրան: Նրա խոսքերով՝ Էդիկը գլխացավեր ու ջերմություն է ունեցել, որը դեղերով փորձել է իջեցնել: Հարկավոր էր, որ բուժկետի պետի կողմից հսկողություն իրականցվեր, այն ժամանակ, երբ հրամանատարը տարել է նրան բուժկետ, սակայն պետը ուշացրել է նրա հոսպիտալ տեղափոխումը: Զինվորի հորեղբոր խոսքերով՝ խնդիրն այն է, թե արդյոք հնարավոր կլիներ փրկել Էդիկին, եթե բժիշկը շուտ հասցներ զինվորին հոսպիտալ: Նա նաեւ հավելեց, որ ջերմության մասին իրենք հետո են իմացել: «Երեխան շուրջ 10 ժամ մնացել է բուժկետում, հետո բուժկետի պետը խոստովանել է, որ 39,9 աստիճան ջերմություն է ունեցել»,- ասել է Շիրակ Շահնազարյանը: «Նրա հետ բուժկետում պառկած մեկ ուրիշ ծառայողին հոսպիտալ են տարել, Էդիկին՝ ոչ»: Բուժկետի պետի խոսքերով՝ Էդիկի ջերմությունն իջել է, լավ է զգացել, այդ պատճառով նրան չեն տեղափոխել հոսպիտալ: Ըստ զինվորի հորեղբոր՝ Էդիկի փրկվելու հավանականությունը մեծ կլիներ, եթե նրան հոսպիտալ տեղափոխեին, քանի որ բոլոր հոսպիտալ տեղափոխվածները փրկվել են:[82]

Ըստ «Հայկական ժամանակ» թերթի տվյալների՝ ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի հրամանով հայտարարվել է խիստ նկատողություն զորամասի շտաբի պետին, հրամանատարի սոցիալ-իրավական գծով օգնականին, գումարտակի հրամանատարին: Թերթի տվյալներով՝ սույն գործով բուժծառայության պետի պաշտոնն իջեցվել է, իսկ զորամասին բուժկետի պետը ազատվել է պաշտոնից:

2014թ. հունիսի 12-ի դրությամբ, ըստ ՀՀ ՊՆ քննչական ծառայության, զինծառայողի մահվան փաստով հարուցված քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:[83]

---

[81] http://galatv.am/hy/news/dik-ahnazaryany-mahvan-naxord-ory-erekoyan-xosel-e-hor-het-heraxosov/
[82] http://news.am/arm/news/195441.html
[83] http://168.am/2014/06/12/375626.html

Էդիկ Շահնազարյանի մահվանից հետո ՊՆ գրեթե բոլոր զորամասերում լուրջ ստուգումներ են սկսվել: «Ժողովուրդ»-ի աղբյուրների փոխանցմամբ՝ զորամասեր են տարվել թոքերի ստուգման համար նախատեսված հատուկ սարքեր, եւ բժիշկները հետազոտում են բոլորին անխտիր՝ անկախ նրանից՝ զինվորը նորակոչիկ է, թե ոչ: Արծրուն Հովհաննիսյանը «Ժողովուրդ»-ի հետ զրույցում ասել է, որ նմանօրինակ ստուգումները նորմալ երեւույթ են, եւ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ այն իրականացվում է հնարավոր վտանգները կանխարգելելու համար[84]:

3. Արշակ Զադայան

2014 թ. փետրվարի 12-ին մի քանի օր բուժումից հետո Արաբկիրի հոսպիտալում մահացել է 1995 թ. ծնված Արշակ Զադայանը:[85] Արշակ Զադայանի մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 376-րդ հոդվածի 2-րդ մասով՝ պետի կամ պաշտոնատար անձի անփույթ վերաբերմունքը ծառայության նկատմամբ, որն անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ:[86]

Նա տառապում էր սուր թոքաբորբով: Արշակ Զադայանը զորակոչվել էր 2013 թ-ին՝ Գորիսի զինկոմիսարիատից: Նա Սյունիքի մարզի Վերին Հնդզեն գյուղից էր: Զինվորը ծառայել է Արարատում:

News.am-ի տեղեկություններով՝ նա Պաշտպանության նախարարության զորքերի ծառայության վարչության պետի տեղակալի քրոջ որդին էր:

Մահվանից օրեր առաջ նա սուր թոքաբորբ ախտորոշմամբ տեղափոխվել է Մուրացանի հանրապետական զինվորական հոսպիտալ, սակայն տեսնելով, որ վիճակը վատանում է, նրան տեղափոխել են Արաբկիրի բժշկական կենտրոն, որտեղ էլ նա մահացել է:

News.am-ի թղթակցի հետ զրույցում «Արաբկիր» բժշկական կենտրոնի պետ Արամ Ասատուրյանը նշել է, որ զինծառայողի մոտ առկա էր սուր թոքաբորբ, մահացության պատճառը՝ հիվանդության ագրեսիվությունն էր, «ինֆեկցիան շատ արագ է զարգացել, հնարավոր չեղավ փրկել նրա կյանքը»: Հոսպիտալի պետն ասել է, որ զինծառայողի

---

[84] http://armlur.am/211872/
[85] http://www.7or.am/am/news/view/63348/
[86] http://newsbook.am/?p=25861&l=am/erek+zinvorakan+hospitalum+mahacac+zinvori+mahvan+aritov+qreakan+gorc+e+harucvel

տեղափոխման պատճառը սուր թոքաբորբի հետեւանքով երիկամների շարքից դուրս գալն է եղել: Նա «Արաբկիր» ԲԿ-ում դիալիզ էր ստանում:[87]

«Փաստինֆո»-ի թղթակցի հետ զրույցում Արծրուն Հովհաննիսյանը նշել է, որ Արշակի մոտ հիվանդության գաղտնի շրջան է եղել այն ժամանակ, երբ նա գտնվել է արձակուրդում: Վերադառնալուն պես նրա մոտ հազ են նկատել եւ անմիջապես հոսպիտալացրել:

«Ազատության» հետ զրույցներում իրավապաշտպանները նշել են, որ թերահավատորեն էին վերաբերվում պաշտոնական այն հավաստիացումներին, որ զինվորն ամենայն հավանականությամբ արձակուրդում եղած ժամանակ դրսում է թոքաբորբով վարակվել, այլ ոչ թե զորամասում: Իրավապաշտպանների տեղեկություններով՝ վերջին շրջանում թոքաբորբը բանակում լուրջ խնդիր է դարձել, որի տարածման պատճառներից մեկն էլ նրանք համարում են ձմեռվա սառնամանիքին նորակոչիկներին 6-10 ժամ զինկոմիսարիատների դիմաց սառեցնելը:[88]

Այս մասին է վկայում նաեւ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից դեռեւս 2013թ. դեկտեմբերին (ձմեռային զորակոչի ընթացքում) հրապարակված հայտարարությունը՝ «Գյումրիում եւս զորակոչիկներին սպասեցնում են սառնամանիքին» վերնագրով, որտեղ ներկայացվում է կազմակերպության կողմից ստացված ահազանգն այն մասին, որ Գյումրիի զինվորական կոմիսարիատում ավելի քան 50 զորակոչիկ եւ նրանց հարազատներ առավոտյան ժամը 9:30-ից սպասում են դրսում՝ սառնամանիքին՝ բուժզննություն անցնելու նպատակով եւ որ նրանց համար չեն ապահովվում պայմաններ՝ ներսում սպասելու համար:[89]

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ, իրավապաշտպան Արթուր Սաքունցը «Առաջին լրատվական»-ի հետ զրույցում ասել է, որ, ըստ իր պարզած տեղեկությունների, Արշակը լիովին առողջ է զորակոչվել: Նրա խոսքով՝ երիտասարդը նույն խնդրով դեպքից առաջ մեկ անգամ արդեն եղել է հոսպիտալում: «Ակնհայտ է, որ լիարժեք բուժում չի իրականացվել, ինչի պատճառով էլ երկու ամիս անց տղան նորից հայտնվել է հոսպիտալում»,- ասել է Արթուր Սաքունցը:[90]

Գ. Մարտական ծառայություն կրելու կանոնների խախտում

[87] http://news.am/arm/news/193991.html
[88] http://www.azatutyun.am/content/article/25262764.html
[89] http://hcav.am/events/հայտարարություն-գյումրիում-եւս-զորա/
[90] http://www.1in.am/arm/armenia_society_250677.html

1. Արման Արտյուշայի Ղուկասյան

2014 թ-ի մարտի 19-ին ղարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հյուսիսային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում մարտական խնդիր կատարելու ժամանակ մահացու հրազենային գնդակային վիրավորում է ստացել զինծառայող, 1994 թ-ին ծնված Արման Արտյուշայի Ղուկասյանը:[91]

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքը), որն առաջացրել է ծանր հետեւանքներ: Գործի շրջանակներում ընթանում է նախաքննություն:[92]

Իսկ 26-ամյա Վարազդատ Զաքարյանը, որը News.am-ի տվյալներով Արագածոտնի մարզի Սուսեր գյուղից է, վիրավորվել է եւ տեղափոխվել Ստեփանակերտի հոսպիտալ: Դեպքը տեղի է ունեցել Մարտակերտի մարտական դիրքերում:

«Ժողովուրդ»-ի տեղեկություններով՝ զինվորները միմյանց շփոթել են հակառակորդի հետ, ինչի հետեւանքով դիրքերում հնչել է կրակոց:

Ըստ զինվորի հարազատներից մեկի կողմից Armlur.am-ին հայտնած տեղեկությունների՝ դեպքը անփութության հետեւանք է: Զինվորի հորեղբայրը պատմել է. «Դիրքի զինվորներն ուրիշ չաստից եկած զինվորներ են եղել: Եկել, իմացել են, որ էնտեղ շինարարական աշխատանքներ են կատարվում: Պոստը փոխելու ժամանակ եկել են աջ թեւի վրա: Մեր երեխան ու մի աֆիցեր խրամատի մեջ են եղել, մի զինվոր էլ խրամատից դուրս գործ անելիս ա եղել: Իմացել են՝ թուրք ա, ըտենց 40 հատ պատրոն միանգամից կրակել են նրանց վրա»:[93]

---

[91] http://nkrmil.am/main/am/newsMore669.html
[92] http://news.am/arm/news/199959.html
[93] http://armlur.am/136486/

Բակո Սահակյանը հրամանագիր էր ստորագրել, համաձայն որի՝ ԼՂ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած արիության համար շարքային Արման Ղուկասյանին հետմահու պարգեւատրել էր «Մարտական ծառայություն» մեդալով:[94]

Մահացած 20-ամյա զինվորը ծառայության էր զորակոչվել 2012 թ-ի աշնանը: Նա Գորիսի Տեղ գյուղից էր, տան միակ արու զավակը, ըստ գյուղապետ Սաղաթել Գալստյանի ուներ իրենից փոքր երկու քույր: «Իր արձակուրդ գալու ժամանակն էր, հենց դեպքի օրը պետք է թուղթը տային, որ հաջորդ օրը գար արձակուրդ, զանգել էր տնեցիքին ասել, որ արձակուրդ է գալու, բայց դեպքը եղել է»,-ասել է գյուղապետը:[95]

Սեյրան Օհանյանի հրամանով՝ Արման Ղուկասյանի մահվան դեպքով նշանակվել է ծառայողական քննություն: News.am- տեղեկություններով՝ քննության արդյունքում զորամասի հրամանատարական կազմի մի շարք ներկայացուցիչներ կենթարկվեն խիստ պատիժների, չեն բացառվում նույնիսկ պաշտոնանկությունները:

Armlur.am-ի հետ զրույցում զինվորի հայրը հայտնել է, որ մի քանի ամիս առաջ են այցելելով զորամաս տեղեկացել են, որ Արմանի մահից հետո հետախուզության բաժնի պետի լիազորությունները դադարեցվել են, եւ նա հեռացվել է աշխատանքից: «Դեռ ոչ մի բան չկա, ոչ մի բան չգիտենք: Քննություն ա ընթանում, ու ով էլ լինի մեղավորը, պիտի պատժվի՝ օրենքի ողջ խստությամբ»,- ասել է զոհված զինծառայող Արման Ղուկասյանի հայրը:[96]

2. Ներսես Ղազարի Կարապետյան

2014 թ-ի հունիսի 10-ին 1in.am կայքով տեղեկատվություն տարածվեց այն մասին, թե Իջեւանի զորամասերից մեկում զինվոր է մահացել եւ որ Իջեւանի քաղաքապետ Վարդան Ղալումյանը հաստատել է այդ լուրը՝ նշելով, որ զինվորը մահացել է իրեն ամրակցված ինքնաձիգի կրակոցից:[97]

Հետագայում ՀՀ ՊՆ տեղեկատվություն է տարածել դեպքի վերաբերյալ, մասնավորապես նշելով, որ մահացած զինծառայողը շարքային Ներսես Ղազարի Կարապետյանն է: Նա մահացել է Իջեւանի քաղաքային հիվանդանոց տեղափոխելու

---

[94] http://www.panarmenian.net/arm/news/177228/
[95] http://news.am/arm/news/199959.html
[96] http://armlur.am/179119/
[97] http://www.1in.am/1285240.html

ճանապարհին:[98] Զինծառայողի մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ[99] ՀՀ քր. օր-ի 365-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը որն առաջացրել է ծանր հետեւանքներ: Քրեական գործով տուժողի իրավահաջորդ է ճանաչվել Ներսես Կարապետյանի եղբայրը՝ Դավիթ Կարապետյանը[100]:

Կարապետյանների հարեւաններ Սամվելն ու Արմենը 1in.am-ի թղթակցի հետ զրույցում պատմել են, որ եղել են Իջեւանում եւ տեսել են Ներսեսի դին՝ գլխի շրջանում հրազենային վիրավորումով:

Նրանք նշել են, որ գնդակը գլխի վերեւի աջ հատվածից մտել՝ ներքեւի հատվածից դուրս է եկել: Իջեւանում նրանց ասել են, որ զենքը մաքրելուց է հավանաբար եղել, սակայն հարեւանները հակված չեն հավատալու նման վարկածի: «Իրենց էլ ենք ասել՝ երեխեն սպանված է՝ միամիտ, թե դիտավորյալ, սպանված է: Հաստատ է: Դեմքին ճանկռվածքի հետքեր էլ կային»,- ասել է հարեւաններից մեկը:

Արմենը նշել է, որ Ներսեսի գլուխն ամբողջությամբ արնաշաղախ էր. «Ես իր գլուխն եմ տեսել՝ արնաշաղախ. թե որտեղ է եղել… մեկ ասում էին՝ բլինդաժում է եղել, հետո ինքը վարորդ է՝ հակասական պատասխաններ էին տալիս: Բայց որ Ներսեսը ինքնասպան չի եղել՝ ասում էին նաեւ այնտեղ»,- ասել է Արմենը:[101]

Հարազատներ եւս չեն հավատում, որ իրոնց որդին կարող էր ինքնասպան լինել, դրա մասին է վկայում նաեւ այն հանգամանքը, որ դատաբժիշկը հարազատների հետ զրույցում եւս հերքել է ինքնասպանության վարկածը, ասելով, որ հրազենային վնասվածքը եղել է Ներսեսի գլխի գագաթային մասում, կրակել են 20-25 սանտիմետր հեռավորությունից:[102]

Azatutyuhn.am-ի տվյալներով՝ Ներսես Կարապետյանը մոտ 11 ամսվա զինծառայող է եղել: Զորամասում վարորդ էր: Ընտանիքի անդամները կարծում են, որ Ներսեսի մահվան պատճառը դեպքից շաբաթներ առաջ զորամասում 180 լիտր բենզինի կորուստն է: Մայրը՝ Սուսաննա Հարոյանը եւ հորաքույրը՝ Կարինե Կարապետյանը պատմում էին, որ բենզինի պակասորդ է գրանցվել, որ Ներսեսը դրա հետ որեւէ կապ չի ունեցել, բայց վաշտի հրամանատարը նրանից է պահանջել կորած բենզինի գումարը: Մայիսի սկզբին տղան մի

[98] http://www.yerkir.am/am/news/67047.htm
[99] http://razm.info/43614
[100] http://armlur.am/276826/
[101] http://www.1in.am/1285606.html
[102] http://www.azatutyun.am/content/article/25384992.html?utm_source=dlvr.it&utm_medium=facebook

քանի օր արձակուրդ է վերցրել, եկել տուն, մայիսի 6-ին վերադարձել է զորամաս, եւ ընդամենը երեք օր հետո իմացել են նրա գլխին կրակելու մասին։[103]

Դեպքի ուսումնասիրության հետագա ընթացքից պարզ է դառնում, որ Կարապետյանին ստորացրել ու վիրավորել են։

Azatutyun.am-ը գրում է, որ ՀՀ ՊՆ քննչական ծառայությունից ստացված տեղեկությունների համաձայն՝ գործով կասկածյալին՝ վաշտի հրամանատար, կապիտան Գարեգին Ասրյանին մեղադրանք է առաջադրվել ստորադաս Կարապետյանի պատիվն ու արժանապատվությունը ստորացնող վիրավորանքներ հասցնելու, ինչպես նաեւ մարտական հերթապահության կանոնները խախտելու, ծառայությունը ոչ պատշաճ կազմակերպելու եւ փաստաթղթեր կեղծելու համար։ Սակայն վաշտի հրամանատարը չի ձերբակալվել, խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը։ Ձերբակալված չէ նաեւ երկրորդ մեղադրյալը, որի մասին հայտնում է քննչական ծառայությունը՝ նույն զորամասի պայմանագրային զինծառայող, սերժանտ Էդգար Մանուկյանը։ Նա մեղադրվում է մարտական ծառայության կանոնները խախտելու ու պաշտոնեական կեղծիքի մեջ։ Մանուկյանը եւս չհեռանալու մասին ստորագրությամբ ազատության մեջ է։ Երկուսն էլ իրենց մեղավոր են ճանաչել։[104]

Ներսես Կարապետյանի գործով նախաքննության ընթացքում ձեռք են բերվել ապացույցներ, որոնց համաձայն՝ 19-ամյա զինծառայողին ստորացրել են, վիրավորել նրա արժանապատվությունը։ Ըստ իրավապաշտպան Ժաննա Ալեքսանյանի «Սա այն եզակի դեպքերից է, երբ տղան պատմել է ընտանիքին այդ բենզինի հանգամանքների մասին։ Այսինքն՝ շատ բան էր հայտնի արդեն, եւ նախաքննական մարմնի համար բավականին հեշտ պիտի լիներ միանգամից պարզել, թե ով է իրական հանցագործը։ Ինչպե՞ս կարող եք այդ դիրքում մի քանի զինվորի մեջ չիմանաք՝ ինչ է կատարվել։ Անհնար է։ Սա դասական կոծկում է, ինչը միշտ անում է զինվորական դատախազությունը ՊՆ քննչական ծառայության հետ համատեղ։ Ակնհայտ է, որ հանցագործությունը կոծկվում է այն դեպքում, երբ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն այցելել է դեպքի վայր՝ բացահայտելու նպատակով։ Բայց նրա գնալուց հետո լռություն է, եւ քննչական ծառայությունը այս մոտեցումն է ցուցաբերում»[105]։

---

[103] http://www.azatutyun.am/content/article/25384992.html?utm_source=dlvr.it&utm_medium=facebook
[104] http://www.azatutyun.am/content/article/25428457.html?utm_source=dlvr.it&utm_medium
[105] http://armlur.am/276826/

Ներսեսի ծնողները շարունակում են պնդել, որ Ներսեսին սպանել եւ դիակը դիրքեր են տարել, որպեսզի ինքնասպանություն ձեւակերպեն, բայց ոչ ոք չի հավատում այդ վարկածին:

Հարուցված քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

3. Մերուժան Աշոտի Հարությունյան (ավագ լեյտենանտ)

2014 թ-ի մայիսի 2-ին լրատվամիջոցներով տարածվել էր լուր այն մասին, որ մեկ օր առաջ Վայքի շրջանում անհետացել է Վայոց Ձորի մարզի զորամասի զինծառայող, կոչումով ավագ լեյտենանտ Մերուժան Աշոտի Հարությունյանը: Տեղեկությունը հաստատվել է ՊՆ մամլո խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի կողմից՝ Panorama.am-ի հետ զրույցում:[106]

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության տեղեկացմամբ՝ իրականացված որոնողական աշխատանքների արդյուքում սահմանային չեզոք գոտում՝ Տանձիկի ջրամբարում ջրահեղձ վիճակում 2014թ. մայիսի 11-ին հայտնաբերվել է ահետացած զինծառայողի դին:[107]

Արծրուն Հովհաննիսյանը yerkir.am-ին հայտնել է, որ դեռեւս հայտնի չէ, թե ինչ պայմաններում ու հանգամանքներում է զինվորականը ընկել գետը եւ նշել, որ դեպքի առնչությամբ տարվում է քննություն՝ պարզելու այդ հարցերի պատասխանները: [108]

ՀՀ ՊՆ քննչական ծառայությունից հայտնել են, Մերուժան Հարությունյանի անհետացման կապակցությամբ դեռեւս մայիսի 3-ին քրեական գործ էր հարուցվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 365 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ «ՀՀ անվտանգության ապահովմանն ուղղված մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը»: [109]

Ըստ ԳԱԼԱ-ի կողմից տարածված տեղեկատվության՝ զինծառայողի մահվան շուրջ շրջանառվում են տարբեր վարկածներ: Մերուժանի հարազատները թերահավատորեն են ընդունում վարկածներից մեկն այն մասին, թե իբր Մերուժանը, մոտեցել է լճափին, ոտքը դնելով տիղմի վրա սայթաքել ու ընկել է ջուրը, ինչն էլ նրա ջրասույզ լինելու պատճառ է դարձել: Նրանք համոզված են, որ Մերուժանը ջուրն ընկնելուց հետո կարող էր լողալով

---

[106] http://www.panorama.am/am/law/2014/05/02/a-soldier/#.U2M8q52-lWQ
[107] http://www.panorama.am/am/law/2014/05/12/a-soldier2/#.U3B1N1r9Wmw
[108] http://www.yerkir.am/am/news/67085.htm
[109] http://razm.info/43625

դուրս գալ այնտեղից: Իսկ մյուս հարազատները, որոնք դիտել են տեղանքը, համոզված են, որ այնտեղ սայթաքելու ոչ մի հնարավորություն չկար, քանի որ տարածքում հատակը բետոնից է եղել:[110]

Դ. Դժբախտ պատահար

1. Գրիգորի Նորայրի Վարդանյան (ՀՀ-ում ՌԴ զորամասի պայմանագրային զինծառայող)

2014 թ-ի փետրվարի 26-ին, ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Լոռու մարզի Ստեփանավան-Լոռիբերդ ավտոճանապարհի 2-րդ կմ հատվածում: Ստեփանավան քաղաքի բնակիչ, 29-ամյա Գրիգորի Վարդանյանը իր կողմից վարած BMW մակնիշի 81 RO 001 համարանիշի ավտոմեքենայով դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի գոտուց եւ մի քանի պտույտ կատարելով՝ գլխիվայր շրջվել: Այս մասին տեղեկատվություն տարածվել է shamshyan.com-ի կողմից:[111]

Վարորդը տեղում մահացել է, իսկ ուղեւոր՝ Ստեփանավան քաղաքի Վիրահայոց փողոցի բնակիչ, 28-ամյա Վահե Մելքոնյանը մարմնական վնասվածքներով տեղափոխվել է Ստեփանավանի բժշկական կենտրոն:

Փաստի առթիվ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Լոռու մարզի քննչական բաժնի Ստեփանավանի քննչական բաժանմունքում հարուցվել է քրեական ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

Գրիգորի Վարդանյանը եղել է ՀՀ-ում Ռուսաստանի Դաշնության զորամասի պայմանագրային զինծառայող:

2. Եսայի Վարուժանի Եսայան (պայմանագրային զինծառայող, ենթասպա)

Մարտի 8-ին Երեւան-Աշտարակ ճանապարհին՝ Քասախ գյուղի մոտ, ժամը 00.00-ի սահմաններում անձնական մեքենայով վթարի է ենթարկվել եւ մահացել Երեւանամերձ

---

[110] http://www.asparez.am/news-hy/carayakicner_ekelen_nkerojn_hrashejttalu-hy/
[111] http://shamshyan.com/hy/article/140226101501/

զորամասերից մեկում ծառայող, ենթասպա Եսայի Վարուժանի Եսայանը: Դեպքի մասին տեղեկություններ է տարածել News.am լրատվական կայքը:[112]

Դեպքի վերաբերյալ այլ մանրամասներ չեն նշվում:

3. Հարություն Գառնիկի Սաֆարյան (ավագ լեյտենանտ)

ԼՂ ՊՆ մամուլի ծառայության փոխանցմամբ մարտի 31-ին դարաբաղաադրբեջանական հակամարտ զորքերի շփման գծի հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում մարտական առաջադրանք կատարելու ժամանակ ականի պայթյունի հետեւանքով մահացու վիրավորում է ստացել 1987թ. ծնված ավագ լեյտենանտ Հարություն Գառնիկի Սաֆարյանը:[113]

News.am-ի թղթակցին ՊՆ քննչական ծառայությունից հայտնել են, որ Հարություն Սաֆարյանի մահվան դեպքով դեռ քրեական գործ չի հարուցվել, հավելելով, որ դեպքի առթիվ դեռ նյութեր են նախապատրաստվում:

News.am-ի տեղեկություններով՝ հնարավոր է նյութերի նախապատրաստմամբ հանցակազմի բացակայության հատկանիշներով քրեական գործի հարուցումը մերժվի:[114]

4. Հովհաննես Հովհաննիսյան (Գնդապետ)

Ըստ shamshyan.com-ի կողմից տարածված տեղեկությունների՝ 2014 թ-ի ապրիլի 26-ին Կոտայքի մարզում ողբերգական ավտովթարի հետեւանքով մահացել է գնդապետ Հովհաննես Հովհաննիսյանը: Ժամը 02:00-ի սահմաններում Երեւանի բնակիչ, 45-ամյա Հովհաննես Հովհաննիսյանը իր վարած մեքենայով Երեւան-Սեւան ավտոճանապարհի 45.5 կմ հատվածում, ճանապարհային ոստիկանության պահակակետի հարեւանությամբ բախվել է իր առջեւով ընթացող Աշտարակ քաղաքի բնակիչ, 48-ամյա Մխիթար Միրզոյանի վարած Զիլ մակնիշի ավտոմեքենային: Մահացած Հ. Հովհաննիսյանը ծառայում էր ՀՀ ՊՆ N զորամասում՝ որպես հրամանատար, կոչումով գնդապետ էր:[115]

---

[112] http://news.am/arm/news/197996.html
[113] http://nkrmil.am/main/am/newsMore676.html
[114] http://news.am/arm/news/203378.html
[115] http://hayeli.am/article/471577/

Ռազմինֆոյի հետ զրույցում ՀՀ ՊՆ քննչական ծառայությունից տեղեկացրել են, որ դեպքի առնչությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով՝ ճանապարհային երթեւեկության եւ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:[116]

5. **Արմեն Յուրիկի Հայրապետյան (կապիտան)**

2014 թ-ի հուլիսի 29-ին ականի պայթյունից մահացել է կապիտան Արմեն Յուրիկի Հայրապետյանը:

2014 թ-ի օգոստոսի 19-ին դիվերսիոն գործողությունները հետ մղելու եւ արժանի հակահարված տալու համար մի շարք զինվորների եւ սպաների պարգեւատրման արարողության ժամանակ ԼՂ ՊԲ նախարար Մովսես Հակոբյանի նշած կապիտան Արմեն Յուրիկի Հայրապետյանի[117] մահվան վերաբերյալ տեղեկատվությունը տարածվել է օգոստոսի կեսերից հետո, սակայն ըստ նախարարի նա մահացել է հուլիսի 29-ին՝ ականի պայթյունից: Ստացվում է, որ դեպքի մասին ՊԲ հայտնել է դեպքից մոտ 2 շաբաթ անց:

6. **Պավլիկ Նիկոլայի Մանուկյան (կապիտան)**

2014 թ-ի սեպտեմբերի 20-ին ՀՀ ՊՆ մամուլի ծառայությունը տարածեց տեղեկատվություն, համաձայն որի սեպտեմբերի 19-ին 17:00-ի սահմաններում N զորամասի «Գազ-66» մակնիշի ՊՆ N զինհամարանիշի ավտոմեքենան՝ նույն զորամասի զինծառայողների ստորաբաժանումը մշտական տեղակայման վայր տեղափոխելու ճանապարհին, Տավուշի մարզի Արծվաբերդ գյուղի մոտակայքում դուրս է եկել ճանապարհի երթեւեկելի մասից եւ գլորվել ձորը, ինչի հետեւանքով մեքենայի ղեկին գտնվող կապիտան Պավլիկ Նիկոլայի Մանուկյանը գլխի շրջանում ստացած վնասվածքից տեղում մահացել է[118]:

Մեքենայում գտնվող մյուս 13 զինծառայողները կյանքին վտանգ չսպառնացող տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով տեղափոխվել են Բերդի զինվորական հոսպիտալ:

---

[116] http://razm.info/42470
[117] https://www.youtube.com/watch?v=prdnfKQQwqU
[118] http://www.mil.am/1411204607

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում հարուցվել է քրական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 377-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ մարտական, հատուկ կամ տրանսպորտային մեքենաներ վարելու կամ շահագործելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ[119]:

Ե. Զենքի հետ վարվելու կանոնների խախտում

1. Գոռ Բաբկենի Գրիգորյան (Լեյտենանտ)

Տես «Հուլիս-օգոստոս ամիսներին դիվերսիայի հետեւանքով զոհված զինծառայողների թվի մասին ամփոփ տեղեկատվություն»-ը:

Զ. Սպանություն

Դիտավորյալ սպանություն

1. Գրիշա Մուրադի Խաչատրյան

ՊՆ տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից ստացված տեղեկության համաձայն՝ 2014 թ-ի հունիսի 20-ին, հայ-ադրբեջանական սահմանագոտու հարավ-արեւմտյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում մահացու հրազենային գնդակային վիրավորում է ստացել ժամկետային զինծառայող, շարքային Գրիշա Մուրադի Խաչատրյանը՝ ծնված 1994 թ: Նա զինծառայության էր զորակոչվել 2013թ. ամռանը Սիսիանի զինկոմիսարիատից:[120]

---

[119] http://www.pastinfo.am/hy/node/51276
[120] http://www.aravot.am/2014/06/20/472913/

Դեպքի վերաբերյալ ի սկզբանե հնչեցին իրարամերժ վարկածներ, մասնավորապես ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Ա. Հովհաննիսյանը դեպքը ներկայացրեց որպես հրադադարի ռեժիմի խախտում:[121]

Իսկ հունիսի 20-ին լրագրողների հարցերին ի պատասխան ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը հայտարարել է, որ Գրիշա Խաչատրյանը նախնական տվյալներով մահացու վիրավորում ստացել է զենքի օգտագործման կանոնները խախտելու հետեւանքով:[122]

Սակայն արդեն իսկ հունիսի 21-ին armlur.am-ի հետ զրույցում ՀՀ ՊՆ քննչական ծառայությունից հայտնել են, որ Գրիշա Խաչատրյանի մահվան փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 104 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով (սպանությունը՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը), եւ հավելել, որ կատարվում է նախաքննություն:[123]

ՊՆ քննչական ծառայության փոխանցմամբ քրեական գործի նախաքննության ընթացքում հարցաքննվել է դիրքի անձնակազմը, նշանակվել են դատաձգաբանական, դատակենսաբանական, դատաբժշկական, ինչպես նաեւ դատահետքաբանական, դատամատնադրոշմային համալիր փորձաքննություններ:

23.06.2014 թ.-ին դեպքի վայրը չպահպանելու եւ այն խեղաթյուրելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 375 հոդվածի 1-ին մասով (հրամանատարի կամ պաշտոնատար անձի կողմից իշխանությունը կամ պաշտոնեական դիրքը չարաշահելը, իշխանազանցությունը կամ պաշտոնեական լիազորությունների սահմանն անցնելը) նախատեսված հանցագործություն կատարելու կասկածանքով ձերբակալվել է նույն զորամասի պայմանագրային զինծառայող, սերժանտ Վարդան Առաքելի Կիրակոսյանը:[124]

Իրավապաշտպան Ռուբեն Մարտիրոսյանը, ով ներկա է գտնվել դիահերձմանը, վստահորեն հայտարարել է, որ Գրիշա Խաչատրյանին սպանել են: Նրա խոսքերով՝ զինվորին սպանել են ոչ ավելի, քան 20 սմ հեռավորությունից: Դա կարելի է եզրակացնել հրազենային վնասվածքի շուրջ առաջացած մրի հետքերից: Կրակոցը արձակվել է աջից ձախ գլխի առանցքի հանդեպ հորիզոնական հարթության վրա:[125]

---

[121] http://galatv.am/hy/tvprograms/about-general/rakocy-ardakvel-e-ajic-depi-dax-nor-manramasner-zincarayogh-risha-achatryani-mahvan-gorcov/
[122] http://www.panorama.am/am/law/2014/06/20/soldier-ohanyan/#.U6Q25YRCEMk.facebook
[123] http://armlur.am/187617/
[124] http://www.tert.am/am/news/2014/06/23/pnmv/
[125] http://galatv.am/hy/tvprograms/about-general/rakocy-ardakvel-e-ajic-depi-dax-nor-manramasner-zincarayogh-risha-achatryani-mahvan-gorcov/

«Իրավունքի» հետ զրույցում Գրիշա Խաչատրյանի մայրը՝ Նազիկ Վարդանյանը, սեպտեմբերի 27-ին հայտարարել էր, որ դեպքից անմիջապես հետո ամուսնուն կանչել էին ու ասել, որ վարկածներից մեկի համաձայն՝ եւս մի հոգի կա, ով վերացրել է երեխային, իսկ թե ով է նա, իրենք էլ չգիտեն: Իսկ Գրիշայի մորաքրոջ դուստրը՝ Գայանե Հարությունյանը, հայտնել էր, որ դեպքի հետ կապված երեք վարկած են ներկայացնում. 1. գուցե մի երրորդ անձ է կրակել Գրիշա Խաչատրյանին, 2. Գրիշայի կողքին գտնվող զինվորներից մեկն է կրակել, 3. Գրիշա Խաչատրյանն ինքնասպան է եղել: Ինքնասպանության վարկածը, սակայն, ըստ Գայանե Հարությունյանի, չեն կարողանում ապացուցել[126]:

Կալանավորված Վարդան Կիրակոսյանի մոր՝ Մարիամ Մարգարյանի կարծիքով իր որդուն անօրինական են պահում կալանքի տակ եւ նրան ձերբակալել են նախարարի հրամանով:

Վստահ լինելով իր որդու անմեղության մեջ, մայրը նշում է, որ կրակոցիցի հետո Վարդանը բարձրացել է «դիրքեր» եւ տեսել, որ զինվորն արդեն վիրավոր ընկած է: Իսկ մինչ այդ նրան հրահագված էր եղել վնասազերծել վիրավոր զինվորի զենքը: Լիցքաթափելով զենքը՝ Վարդանն այն նորից դրել է տեղը: «Իմ տղայի ամբողջ մեղավորությունը կայանում է նրանում, որ ինքը զենքը տեղաշարժել է եւ հետաքննությանը խանգարել է, ու իբր թե մինչեւ հիմա չեն կարողանում պարզել, թե ով է կրակել»,- ասում է ձերբակալված սերժանտի մայրը[127]:

2. Գեւորգ Արտեմի Ավագյան

2014 թ-ի հուլիսի 18-ին՝ ժամը 07:00-ի սահմաններում, ՊԲ հարավային ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետերից մեկում մահացու հրազենային վիրավորում է ստացել զինծառայող, 1994 թ. ծնված Գեւորգ Արտեմի Ավագյանը[128]*:*

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին հատկանիշներով՝ սպանություն՝ ապօրինաբար մեկ ուրիշին դիտավորությամբ կյանքից զրկելը: Քրեական գործի շրջանակներում ձերբակալվել ապա մի քանի օր անց

---

[126] http://www.iravunk.com/index.php?option=com_content&view=article&id=20502%3A-l-&catid=41%3Alurer&Itemid=57

[127] http://galatv.am/hy/news/ahmanapah-zinvori-teghy-henaketum-e-och-te-bantaxcum-inch-e-katarvel-hunisi-20-in-ew-ov-e-meghavor-20-amya-zinvori-mahvan-hamar/

[128] http://galatv.am/hy/news/ahacu-hrazenayin-viravorum-e-stacel-zincarayogh-org-vagyany/ , http://nkrmil.am/main/am/newsMore735.html

կալանավորվել է Գեւորգ Ավագյանի ծառայակիցը շարքային Արմեն Հրաչյայի Սարգսյանը[129]:

ԳԱԼԱ-ի աղբյուրների տվյալներով Գեւորգ Ավագյանը զինվորական ծառայության զորակոչվել էր Աշտարակի զինկոմիսարիատից: Նա Աշտարակի Ոսկեվազ համայնքից էր: Ապրում էր ծնողների եւ փոքր եղբոր հետ: Արմեն Սարգսյանի եւ Գեւորգ Ավագյանի միջեւ վիճաբանություն է տեղի ունեցել:

Հարազատներին ու համագյուղացիներին հասած տեղեկություններով՝ պատճառն այն է եղել, որ սպանված զինծառայողի ծառայակիցը դիրքերում՝ հերթապահության ժամանակ քնել է, իսկ Գեւորգն արթնացրել է նրան, հետո դիտողություն արել, որ դիրքերում չեն քնում: Ոսկեվազի գյուղապետ Հայկ Հովհաննիսյանի խոսքերով՝ դիահերձման ընթացքում ինքն էլ զինծառայողի հարազատների հետ ներսում է եղել եւ դիակի վրա ծեծի կամ խոշտանգման հետքեր չի նկատել[130]:

1in.am-ի տեղեկությունների համաձայն՝ դեպքը տեղի է ունեցել Հադրութի հենակետում հերթափոխի ժամանակ: Գեւորգ Ավագյանի վրա կրակած զինծառայող Արմեն Սարգսյանը քնած է եղել պահակակետում: Գեւորգը երկու ծառայակիցների հետ մոտեցել է, արթնացրել Արմենին եւ հարցրել, թե ինչու է քնել հերթապահության ժամանակ: Խոսակցությունը վերաճել է վիճաբանության եւ հայհոյանքների, ինչից Արմենը բորբոքվել է եւ մատը չվերցնելով ձգանից՝ ամբողջ պահունակը կրակել է Գեւորգի ուղղությամբ:

Արմենը Սարգսյանը ծնունդով Ալավերդուց է, զինվորական ծառայության էր զորակոչվել դեպքից 6 ամիս առաջ եւ առաջին անգամ էր դիրքեր բարձրացել, առաջին հերթափոխն էր:

«Առաջին լրատվական»-ի տեղեկություններով, սակայն, Արմենը ծառայության զորակոչվել է առողջական բազմաթիվ խնդիրներով՝ 3-րդ կարգի հարթաթաթություն ունի, որոշակի աստիճանի ճարպակալում, թոքերի խնդիր: Նա մի քանի անգամ հանձնաժողովով է անցել, նշվել է, որ հաստատված է՝ պիտանի չէ շարային ծառայության: Բացի այդ, նրան չէր թույլատրվում նաեւ հենակետ բարձրացնել: Սակայն ծառայության անցնելուց հետո նա եւ մասնակցել է շարային ծառայությանը, եւ, փաստորեն, դիրք է բարձրացել:

---

[129] http://168.am/2014/07/18/388937.html
http://shamshyan.com/hy/article/21462/
[130] http://galatv.am/hy/news/arkac-zincarayoghi-spanutyan-pattwarn-ayn-e-eghel-or-qnic-artnacrel-e-carayakcin-u-ditoghutyun-arel/

Արմենի հարազատների փաստմամբ, նա նաեւ հոգեկան որոշ խնդիրներ է ունեցել, ինչի մասին, սակայն բժշկական փաստաթղթերում ամրագրված չի եղել: Նրա հայրը պատրաստվում էր առաջիկա օրերին գալ Երեւան՝ զինվորական հանձնաժողովից պարզելու, թե ինչու է իր ծառայության ոչ պիտանի որդին այս օրերին դիրքերում, սակայն փաստորեն չի հասցրել:

Արմենի հարազատները կատարվածի այլ վարկած էին նշում: Նրանք դեպքի մասին հասցրել էին իմանալ, որ վեճը սկսվել է այն բանից հետո, երբ Գեւորգն ու մյուս ծառայակիցները Արմենին գտել էին հենակետում նստած, ոչ թե քնած: Նա ասել է, որ իր ոտքերը ցավում են, եւ չի կարող երկար կանգնել, ինչից էլ վեճը սկսվել է ու թեժացել[131]:

Զենքի հետ վարվելու կանոնների խախտման հետեւանքով սպանություն

1. **Դերենիկ Արամի Մանուկյան**

ԷՂ ՊՆ մամուլի ծառայությունը տեղեկատվություն է տարածել այն մասին, որ 2014 թ-ի հունիսի 11-ին ՊԲ հյուսիսային (Գյուլիստան) ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում գլխի շրջանում հրազենային մահացու վիրավորում է ստացել զինծառայող, 1994 թ-ին ծնված Դերենիկ Արամի Մանուկյանը:[132]

ՊՆ քննչական ծառայությունից ՍիվիլՆեթին տեղեկացրել են, որ մահվան փաստով հարուցվել է քրեական գործ ՀՀ Քրեական օրենսգրքի 373-րդ հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով՝ զենքի, ռազմամթերքի, ինչպես նաեւ ռադիոակտիվ նյութերի, պայթուցիկ կամ շրջապատի համար առավել վտանգ ներկայացնող այլ սարքերի, առարկաների կամ նյութերի հետ վարվելու կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է մարդու մահ:

Քրեական գործի շրջանակում նախ ձերբակալվել, ապա կալանավորվել է ժամկետային զինծառայող, շարքային Վոլոդյա Մանուկի Բաբիկյանը:[133]

---

[131] http://www.1in.am/1373340.html
[132] http://nkrmil.am/main/am/newsMore715.html
[133] http://civilnet.am/meri-sargsyan-soldier-arrested/

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ դեպքի ժամանակ հենակետում ուժեղ կայծակ է եղել, եւ կրակող զինծառայողը, կայծակը շփոթելով կրակոցների հետ, վախից կրակել է, ինչն էլ ծառայակցի մահվան պատճառ է դարձել:

«Ժողովուրդ»-ի հետ զրույցում, մահացած զինվորի հորաքույրը՝ Թամարա Մանուկյանը, ասել էր, որ իրենք բողոք չունեն, քանի որ Դերենիկի հարազատ եղբայրը՝ Հրաչիկը, որը դեպքի պահին կողքի խրամատում է եղել, ծնողներին վստահեցրել է, որ եղբայրը պատահականության զոհ է դարձել:

Զինծառայողի հարեւանուհու News.am-ի հետ ունեցած զրույցից պարզվել է, որ Դերենիկ մայրը դիմելու է քննչական մարմիններին, որպեսզի որդու մահվան գործով կալանավորված Վոլոդյա Բաբիկյանին չդատեն:

Դերենիկի մորաքույրը 1in.am-ի[134] հետ զրույցում նշել է, որ Դերենիկը ողնաշարի խնդրով եւ -5 տեսողությամբ զորակոչվել էր զինծառայության: Եվ չնայած այդ հանգամանքին նրան ուղարկել են առաջին գիծ՝ ստիպելով բարձրանալ 20 կմ՝ 12 կիլոգրամանոց գնդացիրը ուսին: Նա նաեւ տեղեկացրել է, որ Դերենիկի եղբորը նույնպես նույն առողջական խնդիրներով զորակոչել են զինվորական ծառայության:

Վերջինս, սակայն, Դերենիկի մահից հետո ազատվել է զինծառայությունից:

2. Վլադիմիր Ալեքսանի Հայրապետյան

ՀՀ ՊՆ տարածած տեղեկությունների համաձայն, 2014 թ-ի օգոստոսի 28-ին, ժամը 18:30-ի սահմաններում, ՀՀ ՊՆ N զորամասի մարտական դիրքերից մեկում գլխի ճակատային շրջանում ստացած հրազենային գնդակային թափանցող մահացու մարմնական վնասվածքով հայտնաբերվել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային, 1995 թ. ծնված Վլադիմիր Ալեքսանի Հայրապետյանը:

Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 365 հոդվածի 3-րդ մասի հատկանիշներով (մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելը՝ որն առաջացրել է ծանր հետեւանքներ): Կատարվում է նախաքննություն[135]:

---

[134] http://www.1in.am/1326951.html

[135] http://www.mil.am/1409293031

Հարուցված քրեական գործի շրջանակներում ձերբակալվել է պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Սիմոն Սարգսի Մկրտչյանը[136]:

Վլադիմիրի հարազատները նրա մահվան մասին լուրը ստացել են մահվանից ժամեր անց: Forrights.am-ը գրում է, որ՝ զանգահարել են բարեկամներին եւ առանց որեւէ նախաբանի հայտնել, որ զինծառայողը ինքնասպանություն է գործել, ապա հավելել են, թե նա այդ քայլին դիմել է ընտանիքի հետ խոսելուց հետո: Նույն երեկոյան զինվորի հայրն ու եղբայրը գնացելել են Մաշտոցի զինկոմիսարիատ, որտեղ նրաց փորձել են համոզել, իբր իրենց որդին ինքնասպան է եղել: Սակայն եղբայրը համոզված էր, որ Վլադիմիրն ինքնասպան լինել չէր կարող. նա տարիներ շարունակ արեւելյան մարտաձեւով է զբաղվել եւ հավասարակշռված, հոգեպես ուժեղ մարդ էր եւ երբեք նման քայլի չէր դիմի:

Փաստորեն, այն բանից հետո, երբ զորամասն ու զինկոմիսարիատը փորձել են ընտանիքին համոզել, որ զինծառայողն ինքնասպան է եղել, առավոտյան ՊՆ-ն տարածել է պաշտոնական հաղորդագրություն, որում նշվում է, որ մահվան փաստով քրեական գործ է հարուցվել է ոչ թե ինքնասպանության հոդվածով, այլ մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման՝ որն առաջացրել է ծանր հետեւանքներ[137]:

Է. Ինքնասպանություն/ինքնասպանության հասցնել

1. Սամվել Մեյրանի Հարությունյան

2014 թ-ի առաջին ինքնասպաություն որակված մահվան դեպքը զինված ուժերում գրանցվել է սեպտեմբերի 8-ին: Ըստ ՀՀ ՊՆ տարածած պաշտոնական տեղեկատվության՝ սեպտեմբերի 8-ին, ժամը 01:15-ի սահմաններում, ավտոհավաքակայանի շինության ետնամասում, ծնոտի շրջանում մահացու հրազենային մարմնական վիրավորումով հայտնաբերվել էր պահակախմբում որպես ժամապահ ընդգրկված ժամկետային զինծառայող, շարքային 1992 թ. ծնված Սամվել Մեյրանի Հարությունյանը[138]*:*

---

[136] http://galatv.am/hy/news/invori-spanutyan-gorcov-derbakalvel-e-partadir-jhamketayin-zincarayogh-sharqayin-imon-argsi-krtchyany/
[137] http://forrights.am/?ln=1&id_=10&page_id=192
[138] http://www.mil.am/1410155556

Նա Երեւանից էր, զորակոչվել էր 2013 թ-ի հունիսին: Զինծառայողը մահացել է Դիլիջանի բժշկական կենտրոն տեղափոխվելիս[139]:

Դեպքի առթիվ քրեական գործ է հարուցվել ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով՝ ինքնասպանության հասցնել: Կատարվում է նախաքննություն[140]: Դեպքի հետ կապված ձերբակալվել է ժամկետային զինծառայող, շարքային Վարդան Վրեժի Դավթյանը: Նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 359 հոդվածի 1-ին եւ 358 հոդվածի 1-ին մասերով, 360 հոդվածի 2-րդ մասով՝ զինծառայողների փոխհարաբերությունների կանոնագրքային կանոնները խախտելը նրանց միջեւ ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում, որն արտահայտվել է ծաղրուծանակի ենթարկելով կամ հալածելով կամ ծեծելով կամ այլ բռնի գործողություններ կատարելով, զորամասում կամ զինվորական ծառայություն կրելու այլ վայրում պետին ծեծելը կամ նրա նկատմամբ այլ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը պետի կամ նրա մերձավորի նկատմամբ, եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ, ինչպես նաեւ զինծառայողին վիրավորանք հասցնելը, որը կատարվել է ստորադասի կողմից պետի նկատմամբ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ[141]:

ՊՆ-ն զինվորի մահվան լուրը նրա հարազատներին հայտնել է ավելի ուշ, քան դեպքի մասին արդեն տեղեկացած armlur.am-ի թղթակիցը, որը զինվորի հարազատների ավելի շուտ է այցելել[142]:

Ինչպես Սամվելի հարեւաններն են վստահեցրել, Սամվելը չէր կարող ինքնասպանություն գործել, քանի որ շատ հավասարակշռված երիտասարդ էր:

Սամվելի հարեւանի խոսքերով, ընտանիքը նախորդ օրը խոսել են երիտասարդի հետ: Հարևանը համոզված լինելով որ դա ինքնասպանություն չէ, կարծիք է հայտնել, որ գոնե երեկոյան՝ այդ քայլին գնալուց առաջ, կզանգեր, թեկուզ չասեր, որ ուզում է կյանքին վերջ տալ, բայց մոր ձայնը երեկոյան վերջին անգամ լսելու ցանկություն կունենար: Նա նաև հավելալ է, որ Սամվելը մերթընդմերթ բողոքում էր ծառայությունից, ու ասում էր, որ համածառայակիցների հետ երբեմն կոնֆլիկտ էր ունենում: Սակայն հարեւանուհին միաժամանակ կարծիք է հայտնել, որ կոնֆլիկտը նման աստիճանի չէր հասնի, եւ ամեն ինչ

---

[139] http://www.aravot.am/2014/09/08/495302/

[140] http://news.am/arm/news/227850.html , http://armtimes.com/hy/read/53604

[141] http://armlur.am/231143/

[142] http://armlur.am/227916/

այսպես չէր ավարտվի: «Գիտե՞ք, կարծում եմ՝ դա անզգուշության հետեւանք է եղել: Կամ էլ, Աստված չանի, ինչ-որ մեկը գլխին սարքած լինի: Սա նույնպես չենք բացառում», - շարունակելով խոսքն՝ ասել է զոհված զինվորի հարեւանուհին[143]:

Իսկ ՀՀ պաշտպանության նախարարը լրագրողներին հայտնել է, որ «Նման դեպքեր գրանցվելու պատճառներից մեկը նաեւ պարապ մնալն է»[144]:

Քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

2. Արթուր Պերճի Մարգարյան

2014 թ-ի դեկտեմբերի 4-ին ԼՂ ՊԲ մամուլի ծառայությունը տեղեկատվություն տարածեց այն մասին, որ նույն օրը ժամը 15:40-ի սահմաններում մահացու հրազենային վիրավորում է ստացել ՊԲ հարավարեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի զինծառայող, 1995 թ-ին ծնված Արթուր Պերճի Մարգարյանը[145]:

Զինծառայողի մահվան փաստի կապակցությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ ՔՕ 110 հոդվածի (ինքնասպանության հասցնելը) հատկանիշներով: Նշանակվել են դիակի դատաբժշկական, ինչպես նաեւ՝ մատնադրոշմային, դատաձգաբանական-դատահետքաբանական համալիր փորձաքննություններ[146]:

Ըստ նախնական վարկածի, զինծառայողն իր վրա կրակ է բացել իրեն ամրակցված զենքից: ԳԱԼԱ-ի հետ զրույցում Քննչական կոմիտեի մամլո խոսնակը նշել է, որ զինվորի մահվան առաջին նախանշանները վկայել են ինքնասպանության մասին, ուստի քրեական գործ է հարուցվել ինքնասպանության հասցնելու դեպքի առթիվ, հավելելով, որ կատարվում է քննություն մահվան բոլոր հանգամանքները պարզելու համար[147]:

19-ամյա Արթուրը Գյումրիից էր: 1 տարի առաջ ընդունվել էր Պետական Տնտեսագիտական համալսարանի Գյումրու մասնաճյուղ:

Իրավապաշտպաններ Արթուր Սաքունցի եւ Ռուբեն Մարտիրոսյանի դիտարկմամբ՝ փորձը ցույց է տալիս, որ սովորաբար ինքնասպանություն են որակվում այն սպանությունները, որոնց իրական մեղավորները սպայական կազմից են ու նրանց արարքը կոծկելու նպատակ կա:

---

[143] http://news.am/arm/news/227850.html
[144] http://www.aravot.am/2014/09/12/496414/
[145] http://www.1in.am/1496747.html
[146] http://galatv.am/hy/news/ayastanyan-shukayum-nkateli-en-drami-arjhezrkman-procesner-oroncov-el-orosh-gorcararner-pordum-en-paymanavorel-sparoghakan-shukayum-ardanagrvogh-gnatwy-ishecnenq-or-2014t-noyemberin/
[147] http://galatv.am/hy/news/rtur-argaryanin-inqnaspanutyan-en-hascrel-qnnchakan-komite/

Արթուր Սաքունցը խնդրի լուծման հիմքում տեսնելով համակարգային փոփոխությունները, կարծում է, որ եթե անցած տարիներին կատարված սպանություններից որեւէ մեկի համար որեւէ բարձրաստիճան պաշոնյա պատժվեր, ապա սպանությունների թիվը հնարավոր է նվազեր: «Այդ համակարգային փոփոխություններ չկատարելը պարբերաբար դրսեւորվելու են այսպիսի մահացության դեպքերով», - ասել է նա:

Իսկ Ռուբեն Մարտիրոսյանը կարծիք է հայտնել, որ դեռեւս չպարզված գործերը միանգամից որակվում են ինքնասպանություն[148]:

Հարուցված քրեական գործով նախաքննությունը շարունակվում է:

3. Դավիթ Հրաչյայի Քոլոյան

Ըստ ԼՂ ՊԲ տվյալների՝ 2014 թ-ի դեկտեմբերի 21-ին ՊԲ արեւելյան ուղղությամբ տեղակայված զորամասերից մեկի պահպանության տեղամասի մարտական հենակետում մահացել է ՊԲ զինծառայող, 1995 թ-ին ծնված Դավիթ Հրաչյայի Քոլոյանը:[149]

Նախապատրաստված նյութերով 2014 թվականի դեկտեմբերի 22-ին ՀՀ քրեական օրենսգրքի 110-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

Ավելի ուշ news.am-ը՝ հիմնվելով իր աղբյուրների տրամադրած տեղեկությունների վրա, հայտնել է, որ զինծառայողը մահացել է նռնակի պայթյունի հետեւանքով[150]:

Հետագայում, ինչպես նշում է forrights.am լրատվակա կայքը[151], ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության առաջին կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի կարգով, հանցագործության հետքեր, այլ նյութական օբյեկտներ հայտնաբերելու, ինչպես նաեւ դեպքի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները պարզելու նպատակով կատարված դեպքի վայրի, Քոլոյանի դիակի արտաքին, դեպքի պահին նրա հագին եղած զրահաբաճկոնի զննումների, ինչպես նաեւ դիրքի զինծառայողների բացատրությունների արդյունքնում ՀՀ քննչական կոմիտեն բավարար հիմքեր է գտել ենթադրելու, որ նռնակը պայթել է Քոլոյանի գործողությունների արդյունքում:

---

[148] http://www.azatutyun.am/content/article/26727621.html
[149] http://lurer.com/?p=167526&l=am
[150] http://news.am/arm/news/245231.html
[151] http://www.forrights.am/?ln=1&id_=10&page_id=217

Դեպքից մի քանի օր անց ՀՀ քննչական կոմիտեի ԶՔԳՎ առաջին կայազորային քննչական բաժնում քննվող քրեական գործի շրջանակներում ձերբակալվել են դասակի հրամանատար, ավագ լեյտենանտ Մ.Բաբայանը եւ շարքային զինծառայողներ Սիմոնյանը, Չապուխյանը: Մ.Բաբայանը կասկածվում է ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարելու մեջ, (իշխանությունը չարաշահելը, իշխանազանցությունը կամ իշխանության անգործությունը): Շարքային զինծառայողները կասկածվում են Դ.Քոլոյանի պատիվն ու արժանապատվությունը ստորացնելով ծաղրուծանակի ենթարկելու, վիրավորելու մեջ:

Շարքային զինծառայող Սիմոնյանը ձերբակալվել է՝ ՀՀ քրեական օրենսգրքի 359-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ) եւ 360-րդ հոդվածի 1-ին մասով (2 դրվագ), իսկ շարքային Չապուխյանը՝ 360-րդ հոդվածի 1-ին մասով (3 դրվագ) նախատեսված արարքներ կատարելու կասկածանքով[152]:

[152] http://galatv.am/hy/news/amketayin-zincarayogh-avit-oloyani-mahvan-depqi-artiv-harucvac-qreakan-gorcov-derbakalvel-e-dasaki-hramanatary-ew-erku-zincarayogh/